



ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ,
ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է
<<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության
պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>>
ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ)
կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից
ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենետիկական պաշարները մեր հանրապետությունում օգտագործվում են տարբեր նպատակներով և բազմաբնույթ կարիքների համար՝ շատ հաճախ առանց գիտակցելու դրանց իրական արժեքը: Մի կողմից գենետիկական պաշարների և դրանց օգտագործման տեխնոլոգիաների մասին ավանդական գիտելիքներին տիրապետող տեղական բնակչության փորձն անխուսափելի է սեփական երկրում պաշարների պահպանության և օգտագործման համար: Շատ երկրներում գյուղատնտեսների ավանդական փորձառություններն աջակցում են գենետիկ բազմազանության պահպանմանը՝ ավանդական տարատեսակների մի քանի սերունդներ շարունակական օգտագործման միջոցով: Մյուս կողմից, գյուղական համայնքներում, որտեղ կուտակված է բույսերի գենետիկական պաշարների մեծ հարստություն, հսկայական վնաս են պատճառում մասնավոր անձանց կողմից վայրի դեկորատիվ ծաղիկների, դեղաբույսերի և ուտելի բույսերի հավաքն իրենց սեփական կարիքները հոգալու համար: Ընդ որում՝ անտեսելով բույսերի վերարտադրման առանձնահատկությունները և գիտական ասպարեզում դրանց անգնահատելի դերը, շատ դեպքերում, ոչ ճիշտ հավաքի պատճառով (ոչ ճիշտ ժամկետ կամ հավաքվող օրգան), ինչպես նաև այն, որ դրանց ամենամյա հավաքը կատարվում է միևնույն վայրից, չի կարող չանդրադառնալ նրա բնական պաշարների անվերադարձ կրճատմանը: Հասկանալի է, որ ամբողջությամբ կանխել վնասը հնարավոր չէ, սակայն որոշ դրական արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է տվյալ վայրերում կիրառել անմիջական շփման մեթոդը՝ ներագրավելով տեղաբնակներին ծրագրերի, սեմինարների, ուսուցողական միջոցառումների մեջ:

Գյուղական վայրերում բուսական աշխարհի գենետիկ պաշարների հավաքի ու օգտագործման վերաբերյալ մոտավոր տեղեկատվություն ունենալու համար «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» Ծրագրի շրջանակներում հարցում է իրականացվել «Էրեբունի» պետական արգելոցին հարակից Մուշավան և Զրաշատ բնակավայրերի, Ողջաբերդ գյուղի բնակիչներից:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՈւՍՈւՄՆԱՍԻՐՈւԹՅՈւՆՆԵՐ

ՄՎՑ-ների «in-situ» պահպանության և օգտագործման վերաբերյալ

Սույն մասնակցային ուսումնասիրությունները կատարվել են ԲՀՊՏ-ներից դուրս բույսերի «in-situ» պահպանության և օգտագործման վիճակը բացահայտելու նպատակով:

Որպես ուսումնասիրման օբյեկտներ ընտրվել են լայն կիրառում ունեցող մշակովի բույսերի վայրի ցեղակիցները:

Վերը նշված բուսատեսակների օգտագործման վիճակի բացահայտման նպատակով ուսումնասիրությունները կատարվել են դրանց աճելավայրերի շրջակա համայնքների բնակիչների կողմից իրականացվող հավաքի վերաբերյալ հարցումների արդյունքների, գիտահանրամատչելի գրականության և օգտագործման կարգավորման իրավական դաշտի գնահատման և վերլուծման միջոցով:

Հարցումները կատարվել են Մուշավան, Ջրաշատ և Ողջաբերդ գյուղերում՝ 30-50 տարեկան, վայրի բույսերի հավաք իրականացնող, ընդհանուր թվով 85 բնակիչներից: Հարցումների արդյունքները ցույց են տվել, որ բույսերի հավաք իրականացնողների միայն 19%-ն է հավաքում շուկայում վաճառելու համար, մնացածը հավաքում են անձնական կարիքների համար և հիմնականում՝ արոտավայրերից ու խոտհարքներից: Հավաքվող բույսերի մոտ 33%-ը դեղաբույս և համեմունքային բույսեր են, մնացածն ուտելի բույսեր են: Ըստ հարցումների, բնակիչների կողմից նշվել են հետևյալ հավաքվող վայրի բույսերը. անթառամ, ավելուկ, արևքուրիկ (սրոհունդ), բազուկ (ճակնդեղ), բոխի, գյազառնուկ, դաղձ, դանդուռ, եզան լեզու, եղինջ, եղրճիկ, էծի մորուս, էրիժնակ (էրինջնակ), լոշտակ, խնջուս, խրխնդոկ, կապար, կատվախոտ, կանգար, հազարատերևուկ, հալիվորուկ, ճարճարտուկ, ճնճղապաշար, մարիամխոտ, մանդակ, մասուր, շամպինիոն, շուշան, չիչխան, չոբան, պարոն, ռադիզա, սիբեխ, սինձ, սպանախ, սպիտակ բանջար, ուրց, փիփերթ:


**ՄՈՆԻՏԱՎԱՆ, ՋՐԱՇԱՏ ԵՎ ՈՂՋԱԲԵՐԴ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՐՋԱԿԱՅՔԻ
 ԼԱՅՆ ԿԻՐԱՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՎԱՅՐԻ ԲՈՅՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿԸ,
 ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

1.	
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Ավելուկ Ավելուկ Rumex
Բույսի հավաքվող մասը	Տերևները
Տարեկան հավաքը կգ-ով	5-60
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է հիմնականում արոտավայրեր/խոտհարքերից, ցանքատարածքներից և բազմամյա տնկարկներից, համայնքի և հավաքողի համար անհայտ պատկանելիության հողերից: Հավաքվում է մայիս, հունիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսներին: Հավաքված բերքը սպառվում է թարմ կամ չոր վիճակում՝ սեփական կարիքները հոգալու համար կամ վաճառվում է շուկայում: Պահանջարկը մեծ է:
Ընդհանուր նկարագիրը	Բազմամյա բույս են: Վեգետացիայի առաջին տարվանից սկսած, բացի իրենց տերևային վարդակից, ձևավորվում են նաև բավականին ամուր և կանգուն ծաղկացողուններ, որոնք ավարտվում են հուրանատիպ ծաղկաբույլերով: Ավելուկի տերևները հաստ են, արմատամերձ, երիտասարդ, միջին և վերին կարճ կոթուններով,

	<p>նիզակաձև, ավելի հազվադեպ եռմասնյա, խոր կտրտված ալիքավոր եզրերով: Արմատները բավականին հաստ են (կոճղարմատ), որոնք մի կողմից աճում են, իսկ մյուս կողմից՝ մահանում:</p> <p>Ծաղկացողունների վրա տերևները դասավորված են հերթադիր, որոնք իրենց չափերով վարդակի տերևներից ավելի փոքր են: Ծաղկաբույլը բարդ հուրան է՝ կազմված պարզ ծաղկաբույլերից: Դրանք դասավորված են ամբողջ ցողունի երկայնքով՝ 5-ից մինչև 15-16-րդ հանգույցները:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Խոնավասեր են, հետևաբար և լայն տարածված ինչպես հանրապետության ցածրադիր (ծ/մ 500-800մ), այնպես էլ բարձրադիր (ծ/մ 2200մ) վայրերում, հատկապես անտառային գոտու հարավային շրջանում, Արարատյան դաշտում և նրա նախալեռնային գոտում: Հանդիպում է Լոռու, Շիրակի, Արարատի, Երևանի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Ավելուկն օգտագործվում է ինչպես թարմ, այնպես էլ չորացած ձևով, զանազան ճաշատեսակների մեջ: Գարնան և ամռան առաջին կեսերին հավաքում են դալար, երիատասարդ, առողջ տերևները և թեթև չորացնելուց հետո հյուսում են, հետո չորացնում՝ ձմռանն օգտագործելու համար: Ուշ աշնանն ավելուկի արմատները մանր կտրատում են և չորացնում: Ավելուկը համարվում է նաև դեղաբույս: Բժշկության մեջ օգտագործվում է թուրմի և եփուկի ձևով: ավելուկի կալորիականությունը ավելի բարձր է, քան պոմիդորինը (245 կալ):</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Մննդային արժեքը բավականին բարձր է, պարունակում է A, B1, B2, PP, S և այլ վիտամիններ, պարունակում է սպիտակուցներ և հանքային աղեր: Տերևներում չոր նյութի քանակը հասնում է մինչև 9,6%, շաքարինը՝ 2,8%, թաղանթանյութինը՝ 1,8%, ազոտական նյութերը՝ 2,93%, սպիտակուցը՝ կալիում, կալցիում, մագնեզիում, երկաթ և այլն: Արմատը պարունակում է 2-12% դաբաղանյութ, ձյութ, եթերային յուղեր, K2 վիտամին:</p>


Մշակութային տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները

Ավելուկը որպես բազմամյա ուտելի բույս,նույն տեղում լավ աճում և բերք է տալիս 3-4 տարի: Այնուհետև, տնկարկներում բույսերը կազմակերպում են մանր տերևներ և ավելի շատ ծաղկացողուն են առաջացնում, որից բերքի որակն ընկնում է: Այս դեպքում անհրաժեշտ է վերատնկել և ստանալ երիտասարդ բույսեր: Ցրտադիմացկուն է, ձմեռում է միայն բույսի արմատային համակարգը: Վեգետացիայի ընթացքում կոճղարմատներում և ստորգետնյա բողբոջներում կուտակվում են մեծ քանակությամբ պահեստային նյութեր, որոնցով պայմանավորված է ապագա բերքը: Ավելուկը լավ է մշակել երկգծային ժապավենաձև սխեմայով, շարքերի միջև թողնելով 25սմ, իսկ ժապավենների միջև՝ 45-50սմ տարածություն: Մոլախոտերով վարակված դաշտում ցանքի լավագույն ձևը շարայինն է, որի դեպքում հնարավոր է ավելի ինտենսիվ պայքար մղել մոլախոտերի դեմ: Շարային ցանքի դեպքում մեկ հա-ին պահանջվում է 4-5կգ, ժապավենային ցանքի համար՝ 8-10կգ սերմ: Խիտ ցանքերի դեպքում պետք է կատարել նոսրացում, բույսը բույսից թողնելով 4սմ-ի, հետագայում՝ 30սմ-ի վրա: Ավելուկի բերքահավաքը կատարում են վաղ գարնանը, երբ տերևների երկարությունը հասնում է 18-20սմ-ի, այնուհետև՝ յուրաքանչյուր 15-20 օրը մեկ: Բերքահավաքից հետո դաշտը պետք է սնուցել օրգանական և հանքային պարարտանյութերով: Հավաքը պետք է կատարել ձեռքով՝ դանակների օգնությամբ: Ավելուկի մեկ հա-ից կարելի է հավաքել միջինը 10-20տ բերք: Սերմնաբուծական նպատակներով կարելի է օգտագործել 3 տարեկան արտադրական ցանքերը: Այդ ժամանակ բույսերը դեռևս հյուծված չեն և ստացվում է բարձրակ սերմ: Սերմերի հասունացման նշանը ցողունների և սերմերի գորշացումն է: Դրանք պետք է հավաքել պարբերաբար: Հասուն ցողունները կտրում են, չորացնում, հետո կախում:

2.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Մրոհունդ Մրոհունդ ծակոտկեն (Արևքուրիք) Hypericum perforatum	
Բույսի հավաքվող մասը	Ծաղիկը	
Տարեկան հավաքը կգ-ով	0,03	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անվիճված է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է բազմամյա տնկարկներից, համայնքային հողերից: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը: Օգտագործվում է թարմ և չորացած վիճակում: Պահանջարկը այնքան էլ մեծ չէ, հանդիպում է զանգվածային և առանձին վայրերում:	
Ընդհանուր նկարագիրը	Մրոհունդ ծակոտկենը բազմամյա, նրբագեղ բույս է, բարակ և սլացող, միայն վերին մասում ճյուղավորվող ցողունով՝ 30-100սմ բարձրությամբ: Ունի վառ կանաչ էլիպսաձև կամ օվալաձև տերևներ՝ 3սմ երկարությամբ, 1,5սմ լայնությամբ, որոնք ցողունի վրա նստած են իրար դիմաց: Ծաղիկները ոսկեդեղնավուն են, երկսեռանի, իրարից առանձին կորացած թերթիկներով, հնգաթերթ պսակով, որոնք հոտավետ խեժի թույլ հոտ ունեն: Տերևի ամբողջ մակերեսը ծածկված է փոքրիկ լուսավոր կետերով: Տերևի հյուսվածքի մեջ գտնվող եթերայուղ արտադրող գեղձերի միջոցով լույսն ազատ թափանցում է և տերևի ծակոտկենության պատրանք ստեղծում: Մրանով է պայմանավորված սրոհունդի այս տեսակի ծակոտկեն անվանումը: Պտուղը երկարավուն է, կաշվեկերպ, սերմերը մանր են և շագանակագույն: Բազմանում է հիմնականում սերմերով (1 բույսը կարող է մեկ տարում վերարտադրել 15000-30000 սերմ) կամ վեգետատիվ ճանապարհով՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:	


<p>Տարածվածությունը</p>	<p>Հանդիպում է չոր, քարքարոտ լանջերին, թփուտներում, մինչև 2300-2500մ բարձրություններում: Հայաստանում այն հանդիպում է ամենուր: Հատկապես շատ է տարածված Ավստրալիայում, Հյուսսային Ամերիկայում և Կանադայում: Այս հատվածներում նույնիսկ հատուկ ծրագրեր են մշակվում բնական միջավայրում տարածվածության կրճատման համար, մասնավորապես արածեցման վայրերում: Այս գեղանի բույսը շատ ահեղ անուն ունի՝ «գազանասպան ծակոտկեն»: Կենդանիները, որոնք ուտում են այս բույսը, կարող են հիվանդանալ: Նրանց գլխի, բերանի, քթի, աչքերի և ականջների շուրջը ուռուցքներ են առաջանում, որոնք ուժեղ թունավորման դեպքում դառնում են խոցեր:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Մեղրատու և դեղատու է: Օգտագործվում է վերգետնյա մասը՝ չոր վիճակում: Հավաքում են ծաղկման ընթացքում: Որպես դեղաբույս օգտագործվում է ջերմերի և փորկապության ժամանակ: Ավիցենան սրոհունդի սերմերի յուղը կաթիլների ձևով օգտագործել է մանկական լսողության խանգարումների ժամանակ, այրվածքների, ուռուցքների, կոնքացավերի և այլ հիվանդությունների բուժման նպատակով: Հնդկաստանում այն օգտագործվում է որպես որդամուղ: Սրոհունդն օգտագործում են կանացի արյունահոսությունների, լեղաքարային հիվանդությունների, գլխացավի, անքնության, ռադիկուլիտի և այլնի դեմ: Օգտագործում են ջրաթուրմի, եփուկի, ոգեթուրմի, մզվածքի ձևով: Որպես համեմունք, օգտագործում են ձկնեղենային ուտեստների և ոգելից խմիչքների մեջ, օգտագործում են նաև որպես թեյ: Վերջին տարիներին սրոհունդն օգտագործում են դեպրեսիայի բուժման համար, որը բավականին տարածված հիվանդություն է և ուղիղ ազդեցություն է թողնում մարդկանց գործունակության վրա: Աշխարհի առաջատար լաբորատորիաներում աշխատանքները նպատակաուղղված են ստեղծելու նոր մոտեցումներ հիպերտենզի օգտագործմամբ ֆոտոդինամիկ թերապիա անցկացնելուն՝ քաղցկեղի բուժման համար:</p>


	«Բնչպես հացն առանց այուրի չի թխվի, այնպես էլ մարդկանց ու կենդանիների շատ հիվանդություններ չի բուժվի առանց սրոհունդի» - ասում են հեքիմները: Բույսին անվանել են խոտ 99 հիվանդությունների համար:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է մի շարք արժեքավոր նյութեր՝ դաբաղանյութեր, էթերայուղ, ինժանյութեր, սապոնիններ, վիտամիններ, կարոտին, դառը մզվածքային նյութեր, ֆլավոնոիդներ և էլի շատ ու շատ այլ կենսաբանական ակտիվ նյութեր:

3.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Ճակնդեղ Ճակնդեղ Beta corolliflora Zoss.	
Բույսի հավաքվող մասը	Տերևը, ցողունը, արմատը	
Տարեկան հավաքը կգ-ով	6-10	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է բազմամյա տնկարկներից, համայնքային հողերից, մարտ-ապրիլ ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը՝ սեփական կարիքները հոգալու համար: Օգտագործվում է թարմ:	
Ընդհանուր նկարագիրը	Բազմամյա, ձմեռադիմացկուն բույս է: Արմատապտուղը խոշոր՝ 8-10կգ, մինչև 15սմ տրամագծով: Գլանաձև, խորանում է հողի մեջ մինչև 1մ և ավելի: Տերևակոթունները երկար են (14-20սմ) սկզբնամասերը պատված են անտոցիանով: Ցողունները անկյունավոր են, որոնց թիվը տատանվում է 8-ի սահմաններում:	

	<p>Ծաղիկը սպիտակ է, թևիկաձև, յուրաքանչյուր մասն ավարտվում է թասակով, ծայրերը հաստ են, երբեմն թեքված դեպի դուրս:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Գլխավորապես հանդիպում է լավ մշակված, հարուստ հողերում և Հայաստանում ունի լայն տարածում՝ Կոտայքի մարզի Թեղենիս և Լոռվա մարզի Դետդ գյուղերի շրջակայքում, Սևանա լճի շրջանում, Ծաղկաձորի, Մեղրաձորի, Աղավնաձորի, Ֆանտանի, Հադիս լեռան (Կոտայքի մարզ), Ծովագյուղի (Գեղարքունիքի մարզ), Ամբերդ ամրոցի, Ապարանի ջրամբարի մերձակա անտառների տարածքներում (Արագածոտնի մարզ): Աճում է գլխավորապես խոնավ վայրերում, ծովի մակարդակից 2000-2700մ բարձրությունների վրա:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Ունի որոշակի հետաքրքրություն ինչպես գիտական, այնպես էլ պրակտիկ տեսակետից, որպես սելէկցիոն ելակյութ ցրտադիմացկուն, չորադիմացկուն, աղադիմացկուն հատկանիշների շնորհիվ: Մինչև այժմ էլ լեռնային այն մարզերում, որտեղ աճում են վայրի ճակնդեղի այս կամ այն տեսակները՝ մարդիկ վաղ գարնանը հավաքում են դրանց տերևները և խաշած, տապակած, ինչպես նաև այլ ձևերով օգտագործում են սննդի մեջ:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Ճակնդեղի տերևները հարուստ են հանքային աղերով և մեծ քանակությամբ վիտամիններով: Տերևում չոր նյութերի քանակությունը կազմում է 8,0-12,3%, որից սպիտակուցային նյութերը 0,3-20%, շաքարներ՝ 2,1-2,7%: C վիտամինի պարունակությունը տատանվում է 30-63,7մլգ%, կարոտինը մինչև 3,1%:</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Ճակնդեղի համար լավագույնն են համարվում օրգանական նյութերով հարուստ, կավաավազային մեխանիկական կազմով, ստրուկտուրային հողերը: Որպես բազմամյա և ապագայի մշակաբույս, շատ կարևոր է վայրի ճակնդեղի համար հողի ճիշտ ընտրությունը, նրա նախապատրաստումը, հատկապես հողի խոր մշակումը, որը կապահովի լավ օդաթափանցելիություն և տաքացում, կապահովի խանավությունը: Հետևաբար մեծ նշանակություն ունի</p>

	<p>որակով կատարած ցրտահերկը (25-30) և հողի մշակման մյուս աշխատանքները: Քանի որ ճակնդեղը բազմամյա բույս է, միննույն դաշտում երաշխավորվում է մշակել 6-8 տարի, ապա նպատակահարմար է ցրտահերկի ժամանակ հող մտցնել 30-40տ/հա գոմադր կամ ազդող նյութի հաշվով 90-100կգ ֆոսֆորական ու կալիումական պարարտանյութեր: Վայրի ճակնդեղի սերմերն իրենց ծլունակությունը պահպանում են բավականին երկար ժամանակ՝ 6-10 տարի, սակայն դժվար ծլունակ են, ուստի ցանքից առաջ այն պետք է մշակել թթվով կամ հումքով: Աշնանը ցանելու դեպքում դրա անհրաժեշտությունը չի լինի: Մեկ հա-ին ցանում են 9կգ սերմ: Ցանքի խորությունը կախված է հողի կազմությունից: Ծանր հողերում՝ 1-2,5սմ-ից ոչ խոր, իսկ թեթև հողերում՝ 2,5-3սմ խորությամբ: Ճակնդեղը պետք է ցանել ակոսներով՝ շարքը շարքից 45սմ հեռավորությամբ: Ծիլերը երևալուց 3-5 օր հետո հարկավոր է միջշարքային տարածությունները փխրեցնել և քաղհանել, որը շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ ճակնդեղի ծիլերը սկզբնական շրջանում դանդաղ են աճում և առանց փխրեցման վատ են աճում: Հետագա տարիներին փխրեցումների ժամանակ պետք է կատարել նաև սնուցում ազոտական պարարտանյութերով: Վայրի ճակնդեղի սերմերը հավաքում են 2-3 նվազով՝ ըստ առանձին ճյուղավորումների հասունացման: Սերմերը սովորաբար հավաքում են այն ժամանակ, երբ կնձիկների 40-50%-ը արդեն գորշ գույն է ստանում: Հավաքված սերմնացողությունները կապում են խրձերով և չորացնում, հետո՝ կալսում, քամհարում, մաքրում և տեսակավորում:</p>
--	--


4.	
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Բոխի Բոխի մանրապտուղ (ձիասանիթ, ժախ) Hippomarathum microcarpum (Bieb.) Petrov
Բույսի հավաքվող մասը	Տերևը, ցողունը, արմատը
Տարեկան հավաքը կգ-ով	5-25
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Հազվադեպ է հանդիպում
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է արոտավայր (խոտհարքերից), մայիս-հունիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը: Օգտագործվում է պահածոյացված վիճակում ինչպես սեփական կարիքները հոգալու, այնպես էլ շուկայում վաճառելու համար: Պահանջարկը միջին է:
Ընդհանուր նկարագիրը	ՀՀ-ում հանդիպում է մեկ տեսակ՝ բոխի մանրապտուղ: Բազմամյա խոտաբույս է: Ցողունը անկյունավոր է, ճյուղավորված, բարձր՝ մինչև 1մ: Տերևները գորշականաչավուն են՝ բազմակի փետրաձև, կտրտված: Ծաղկաբույլը հովանոց է, ծաղիկները՝ դեղին: Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին: Պտուղը ձվաձև է կամ գնդաձև:
Տարածվածությունը	Տարածված է Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի և մնացած մարզերում: Աճում է չոր և քարքարոտ լանջերին:
Օգտագործումը	Դեղաբույս է, հաստ տերևակոթուններն օգտագործում են սննդի մեջ: Նուրբ տերևակոթունները հավաքում են ապրիլ-մայիս ամիսներին և օգտագործում թթվեցված ձևով:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է էթերայուղեր, ալկալոիդներ:

5.	
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Գյազառնուկ Վայրի գազար <i>Daucus carota</i> ssp. <i>orientalis</i> Rubass. 
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևը
Տարեկան հավաքը կգ-ով	----
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է ապրիլ-մայիս ամիսներին, ընդամիջումներով, հավաքողի համար անհայտ պատկանելիության հողերից: Օգտագործվում է պահածոյացված վիճակում՝ սեփական կարիքների համար: Պահանջարկը միջին է, բույսը հանդիպում է զանգվածային առանձին վայրերում:
Ընդհանուր նկարագիրը	Գազարի վայրի տեսակները միամյա են և աչքի են ընկնում բարակ, ամուր արմատներով, այն դեպքում, երբ մշակովի գազարի բույսերը երկամյա են: Վայրի գազարը մշակովի սորտերի համեմատ ունի բարակ, ոչ հյութալի, նույնիսկ կոպիտ կառուցվածք, փայտացած, ոչ քաղցր արմատապտուղներ, որոնց տրամագիծը խիստ տատանվում է կապված միջավայրից, որտեղ աճում են դրանք: Սրանց մոտ նկատելի է որոշակի պոլիմորֆիզմ: Աճում են կամ միայնակ կամ խմբերով, երբեմն առաջացնում են բուսուտներ: Մեծամասամբ վայրի գազարի բույսերն ունեն սպիտակ գույն, երբեմն նաև կեղտոտված սպիտակավուն կամ կաթնասպիտակավուն երանգով արմատներ: Հյուսիսային շրջաններից մինչև հարավ, ըստ տարածման, դրանց տերևները դառնում են խիստ թավոտ, մազմուկներով պատված: Միջին հաշվով բույսերի ծաղկացողուններն ունենում են մինչև 150սմ


	<p>և ավելի բարձրություն: Ծաղիկները հավաքված են բարդ հովանոցներում, որոնք բազմաձաղիկ են, եզրերում ունեն 1-2սմ երկարություն:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Տարածումը կապ չունի զբաղեցրած վայրի դիրքից, ծովի մակարդակից ունեցած բարձրությունից: Դրանք հանդիպում են ինչպես ցածրավայրերում, այնպես էլ բարձրադիր գոտիներում: Բայց դիտումները ցույց են տվել, որ բույսի աճելավայրի վրա մեծ ազդեցություն են թողնում միջավայրի պայմանները: Արևելյան ենթատեսակը (<i>ssp. orientalis</i> Rubass.) Հայաստանում հանդիպում է գրեթե ամենուրեք, իսկ հյուսիս-արևելյան շրջաններում (Տավուշի մարզ) հայտնաբերվել է նաև արևմտյան ենթատեսակը (<i>ssp. occidentalis</i> Rubass.): Երկու ենթատեսակներն էլ աճում են որպես դաշտամուլախոտեր՝ ճանապարհների եզրերին, խաղողի այգիներում, բանջարանոցներում, անտառային բացատներում, հեղեղատներում և գետափերին:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Ժողովուրդը վայրի գազարն օգտագործում է շատ վաղ ժամանակներից մսի և ձկան կերակրատեսակներում որպես համեմունք, ինչպես նաև մարինադների և օդու արտադրությունում: Ձկան, մսի վերամշակման ժամանակ վայրի գազարի պտուղերի օգտագործումը պահպանում է նրանց արտաքին տեսքը, տալիս հաճելի, յուրահատուկ հոտ և համ: Պտուղներն օգտագործում են նաև որպես դեղաբույս՝ միզամուղ, ինչպես նաև միզածորանի և երիկամների աշխատանքը կարգավորող միջոց: Նախկինում գազարի սերմերը օգտագործվել են որպես հանգստացնող միջոց և ճիճվաթափությանը նպաստող, իսկ ժողովրդական բժշկությունում որպես սրտանոթային հիվանդությունների բուժամիջոց: Նրանից ստացվող գերանոիլը և եթերային յուղը կարելի է օգտագործել կոսմետիկայում, իսկ անտիսեպտիկ հատկանիշները կիրառական են նաև դիֆտերիայի դեմ: Հայաստանում վայրի գազարը կամ ժողովրդի մեջ հայտնի գյազրուկը, օգտագործվում է նաև որպես վաղ գարնանային «կանաչ բանջար»՝ խաշած և տապակած:</p>

<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է չոր նյութեր, եթերային նյութեր, վիտամիններ՝ (C, B1, B2), կարոտին (A-նախավիտամին):</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Վայրի գազարի երկու ենթատեսակներն էլ, չնայած իրենց մորֆոլոգիական և կենսաբանական հատկանիշների տարբերությանը, ունեն օգտագործման միևնույն հեռանկարները: Վայրի գազարը լավ աճում և փարթամ տերևային զանգված է առաջացնում մոլախոտերից մաքուր, խոր մշակված, փուխր հողերում, որը պետք է նախապատրաստել նախորդ աշնանից՝ կատարելով ցրտահերկ 25սմ խորությամբ: Այն հողերը, որոնք նախորդների մշակության ժամանակ հարստացվել են օրգանական պարարտանյութերով, հնարավորության դեպքում պետք է հարստացնել նաև հանքային սննդատարրերով, քանի որ վայրի գազարը շատ պլաստիկ է և զգայուն հողի նկատմամբ: Վայրի գազարը կարելի է ցանել հարթ մարզերով և նեղ ժապավենաձև՝ 5-ից ոչ պակաս գծով (5-7կգ հա): Ժապավենաձև ցանքի դեպքում գծերի միջև տարածությունը պետք է վերցնել մինչև 10սմ, իսկ ժապավենների միջև՝ 45սմ: Վայրի գազարի սերմերն անհրաժեշտ է ցանել 1-1,5սմ խորությամբ, որոնք սակայն ուշ են ծլում, հետևաբար անհրաժեշտություն է լինում դաշտը ցանքից 10օր անց փոցիսել: Ծիւելուց հետո վայրի գազարի մշակման հիմնական աշխատանքներն են՝ նոսրացում, քաղհան, փխրեցում և ոռոգում: Սննդի մեջ օգտագործում են վայրի գազարի 5-6 տերևից բաղկացած վարդակը: Կարելի է ինչպես հնձել, այնպես էլ արմատներով հանել և վերջիններիս հեռացումից հետո օգտագործել սննդի մեջ: Վաճառքի կարելի է ուղարկել կամ փնջերով (մինչև 150գ) կամ առանց փնջերի: Ընդհանրապես գյազրուկի դաշտը շատ շուտ է ազատվում (բերքահավաքը մինչև մայիսի կեսերը), որից հետո այն կարելի է դնել նաև սածիլվող այլ բանջարային մշակաբույսերի տակ: Սերմնաբուծական նպատակներով ցանքերը պետք է կատարել բացառապես ժապավենաձև: Մշակության տեխնոլոգիան նույնն է, ինչ արտադրական ցանքերինը: Բայց քանի որ վայրի գազարը</p>

	միամյա է, ապա լավորակ սերմեր ստանալու համար նրանց տերևային մակերեսները չպետք է հնձել, որը կարող է թուլացնել բույսին: Հասունացած հովանոցները կտրում են, խրճերով (կապոցներ) չորացնում և հետո կալսում ու քամհարում:
--	--

6.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Դաղձ Անանուխ դաշտային (դաղձ) <i>Mentha arvensis</i> L.	
Բույսի հավաքվող մասը	Տերևը և ցողունը	
Տարեկան հավաքը կգ-ով	8-10	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է հիմնականում մասնավոր հողերից, մայիս-հոկտեմբեր, մարտ-ապրիլ, հունիս-սեպտեմբեր ամիսներին՝ յուրաքանչյուր հանդիպածը կամ ընտրովի: Օգտագործվում է սեփական կարիքների և վաճառքի համար: Հանդիպում է հազվադեպ կամ զանգվածային՝ առանձին վայրերում: Օգտագործվում է որպես համեմունք և դեղաբույս՝ թարմ և չորացած վիճակում: Պահանջարկը միջինից բարձր է:	
Ընդհանուր նկարագիրը	Բազմամյա և միամյա բուրավետ խոտաբույսեր են: Կոճղարմատավոր է, սողացող: Ցողունը քառանիստ է, ճյուղավորվող, բարձրությունը 20-40 (100)սմ: Տերևները երկարավուն են, էլիպսաձև, նստադիր, սղոցաեզր: Ծաղկաբույլը հասկանման է: Ծաղկում է հունիս-սեպտեմբեր ամիսներին:	
Տարածվածությունը	ՀՀ-ում հայտնի է 4 տեսակ՝ դաղձ դաշտային <i>M. arvensis</i> , դաղձ երկարատերև <i>M. longifolia</i> , դաղձ լվածադիկ <i>M. pulegium</i> , դաղձ	


	պղպեղային <i>M. piperita</i> : Առաջին երկուսը տարածված են ՀՀ բոլոր մարզերում, իսկ երրորդը՝ միայն մշակության մեջ, չորրորդը՝ Լոռու մարզում: Աճում են դաշտերում, մարգագետիններում, բանջարանոցներում, խոնավ վայրերում, գետերի և լճերի ափերին, ճամփեզրերին:
Օգտագործումը	Դեղաբույս է, օգտագործվում է որպես ցավամոքիչ, քրտնաբեր անոթալայնիչ, խարխաբեր: Օգտագործվում է հրուշակեղենի և լիկյորների, ոչ ալկոհոլային խմիչքների բուրավետացման համար: Մեղրատու է: Տերևացողունները հավաքում են սկսած մարտ-ապրիլ ամիսներից, ապա նաև հունիսի կեսերին: Օգտագործվում են նաև ծաղկաբույլերը, որոնք արժեքավոր բուրավետ, ենթայուղերով հարուստ կանաչ զանգված են, օժտված նաև բազմաթիվ բուժիչ հասկություններով:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Տերևները և ծաղկաբույլը պարունակում են 1,5-3,0% էթերայուղ:

7.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Դանդուռ Դանդուռ բանջարանոցային <i>Portulaca oleracca L.</i>	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը տերևներով	
Տարեկան հավաքը կգ-ով	7-10	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է հունիս-օգոստոս ամիսներին՝ մասնավոր հողերից: Օգտագործվում է թարմ և պահածոյացված վիճակում: Հանդիպում է զանգվածային՝ առանձին վայրերում:	


<p>Ընդհանուր նկարագիրը</p>	<p>Պատկանում է դանդաղագիների ընտանիքին: Միամյա բույս է, ունի շատ կարճ վեգետացիա: Մերմից անմիջապես առաջանում է մեկ ցողուն, որի վրա դասավորված են հակադիր տերևները: Ցողունն ունի բաց կարմրավում երանգ: Որոշ ժամանակից արմատավզիկի վերևի մասից ձևավորվում են երկու-երեք ցողուններ, որոնք աճելով հասնում են առաջինին և այնուհետև գրեթե հավասարազոր արագությամբ աճում: Տերևներն ունեն կաթիլաձև տեսք կամ նշաձև են, շատ կարճ տերևակոթունով, որը գրեթե նկատելի չէ: Տերևաթիթեղը հաստ է, մսալի, նուրբ, արտաքին մակերսը մուգ, իսկ ստորինը՝ բաց կանաչ, բյուրեղանման, ամբողջաեզր է, ջղավորությունն աննկատ: Ունեն հակադիր դասավորվածություն: Տերևածոցերից ձևավորվում են երկրորդ կարգի ճյուղերը, որոնք էլ սկիզբ են տալիս հաջորդ կարգի ճյուղերին: Յուրաքանչյուր ցողուն ավարտվում է (3-4 հանգույցից հետո) ծաղիկներով (2-3 հատ), որոնք նստադիր են՝ առանց ծաղկակոթերի: Ջերմասեր է, դիմացկուն է հողի չորության նկատմամբ: Փարթամ վերերկրյա զանգված է առաջացնում հատկապես ապրիլ-մայիս ամիսներից սկսած: Վեգետացիայի ընթացքում կարելի է մի քանի անգամ բերք հավաքել:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Հանդիպում է գրեթե ամենուրեք՝ Արարատյան դաշտում, նրա նախալեռնային գոտում և այլուր: Բոլոր տեսակի ջերմաստիճանում համարվում է վտանգավոր մոլախոտ: Տարածված է հատկապես բերրի, թեթև, կավավազային մեխանիկական կազմով հարուստ հողերում, բավարար ջերմային պայմաններում: Դանդաղաձև աղբոսված տարածքներում այն տալիս է անընդհատ շատ բարձր ծլունակություն՝ ի հաշիվ հողում պահպանված բազմաթիվ սերմերի: Դանդաղը համարվում է բանջարանոցային մշակաբույսերի ամենատարածված մոլախոտերից մեկը, որն իր շատ մանր և խիստ ծլունակ, ինչպես նաև շատ կարճ ժամանակում սերմ առաջացնելու հատկության շնորհիվ շատ արագ է տարածվում:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Օգտագործվում է սննդի մեջ: Ցողունները սննդի մեջ օգտագործման համար պիտանի են դառնում 35 օր անց, չնայած որ վեգետացիան շատ երկար կարող է ընթանալ: Դանդաղի օգտակար</p>

	<p>հատկանիշների և բուժիչ դերի մասին շատ տեղեկություններ կան: Տերևներն ու երիտասարդ ընձյուղներն օգտագործվում են թարմ կամ պահածոյացված վիճակում:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է չոր նյութեր, նորադրենալին: Տերևները պարունակում են վիտամիններ: Ամբողջ բույսը պարունակում է E վիտամին: Արմատը պարունակում է գլյուկոզիդներ, միկրոտարրեր:</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Դանդուղը միամյա, արագ աճող բույս է, որի ցողունները սննդի մեջ օգտագործման համար պիտանի են դառնում ցանքից 35 օր անց, չնայած վեգետացիան շատ երկար կարող է ընթանալ: Դանդուղը պահանջկոտ չէ հողային պայմանների նկատմամբ, սակայն նրան հատկացվող դաշտը, հատկապես գարնան ցանքի ժամանակ անհրաժեշտ է նախապատրաստել աշնանից՝ կատարելով ցրտահերկ: Դանդուղը կարելի է օգտագործել թե աշնան, թե գարնան ցանքերի, նունիակ կրկնացանքի ձևով, հատկապես աշնանը՝ թթու դնելու համար օգտագործելիս: Վեգետացիայի ընթացքում կարելի է մի քանի անգամ բերք ստանալ: Մշակության աշխատանքները սկսում են ցանքից, որը կատարվում է 5-7 գծանի ժապավենաձև սխեմայով: Միջժապավենային տարածությունը պետք է վերցնել 45սմ, իսկ ժապավենի ներսում միջշարային հեռավորությունը է 15-20սմ, միջբուսային տարածությունը՝ 5-7սմ: Սերմերը շատ արագ են ծլում, ցանքից 15 օր անց պետք է արդեն նոսրացում կատարել, որի ժամանակ հեռացված բույսերն օգտագործվում են սննդի մեջ: Ցանքից 35 օր հետո, դանդուղի շառավղաձև տարածված ընձյուղները, որոնք հյութալի են և նուրբ, կտրում են դանակով և օգտագործում թարմ կամ պահածոյացված վիճակում: Վեգետացիայի ընթացքում կարելի է 2-3 անգամ ընտրողական բերքիավաք կատարել: Կարելի է մտցնել ցանքաշրջանառության մեջ, սակայն հաջորդ մշակաբույսերի դաշտերում կարող է դառնալ աղբոտվածության պատճառ (լրիվ չհասունացած սերմերն անգամ խիստ ծլունակ են): Վեգետացիայի ընթացքի անհրաժեշտ աշխատանքներից են մի քանի անգամ կատարվող քաղհան-փխրեցումները և ըստ անհրաժեշտության</p>

	<p>ջրումները: Սերմնաբուծությամբ զբաղվելիս, մշակության աշխատանքները նույնն են, միայն լավ է սերմերը ստանալ ամռան ընթացքում: Կանաչ բույսի վրա միշտ կան և ծաղիկներ, և հասունացած սերմեր, որոնք շատ արագորեն տարածվում են: Երբեմն, եթե միևնույն դաշտում մի քանի անգամ պետք է դանդուռ մշակել, կարելի է նույնիսկ սերմերն ընդհանրապես չհավաքել, միևնույն է դրանք այնքան շատ են թափվում, որ մեկ անգամ վար և փխրեցում կատարելուց հետո կարելի է միայն դաշտ ջրել: Դանդուռի սերմերը միևնույն է անպայման կծլեն և այն էլ մասսայական, միայն այս դեպքում հարկ կլինի տրակտորային կուլտիվատորների ջրման ակոսներ բացել:</p>
--	---

8.	<p>Եզան լեզու Եզան լեզու (Եզան լեզու մեծ) Plantago major</p>	
<p>Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>		
Բույսի հավաքվող մասը	Տերևը	
Տարեկան հավաքը կգ-ով	2	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	<p>Հավաքվում է ապրիլից մինչև նոյեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում: Օգտագործվում է որպես դեղաբույս, յուրաքանչյուր հանդիպածը սեփական կարիքների համար, թարմ և չորացած վիճակում: Պահանջարկը միջին է:</p>	
	<p>Երկամյա, երբեմն բազմամյա խոտաբույս է: Ծաղկակիր ցողունների բարձրությունը 5-50սմ է: Տերևները ջղավոր են, հիմնականում</p>	


<p>Ընդհանուր նկարագիրը</p>	<p>արմատամերձ, վարդակում երբեմն հերթադիր կամ հակադիր, գծաձև, գծանշտարաձև, ձվաձև, էլիպսաձև: Ծաղկաբույլը հասկ է կամ գլխիկ, ծաղիկները մանր են, երկսեռ, սպիտակավուն: Ծաղկում են ապրիլ-մայիսին: Պտուղը բազմասերմ է, տուփիկ, սերմերը մանր: Որոշ տեսակներ դեղաբույսեր են:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>ՀՀ-ում հայտնի է 10 տեսակ, որոնք հանդիպում են Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Սյունիքի և այլ մարզերի շրջանում: Աճում են ավազոտ, ադուտ խոնավ հողերում, անտառի բացատներում, մարգագետիններում, ճանապարհների եզրերին, գետերի, առուների ափերին: Առավել նշանակություն ունեն վերոնշյալ երկու տեսակները:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Դեղաբույս է, պատրաստուկները կիրառվում են որպես հակաբորբոքային, ջերմիջեցնող, խորխաբեր, մարսողությանը նպաստող, վերքերին ամոքող միջոցներ: Կոսմետիկայում լորձն օգտագործվում է որպես օսլայի փոխարինող, կիրառվում է նաև տեքստիլ արտադրությունում և տպագրության մեջ: Մատղաշ տերևներն ուտելի են: Տերևաթիթեղները հավաքում են սկսած ապրիլ-մայիս ամիսներից և օգտագործում բուժական նպատակներով:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Բույսը պարունակում է գլիկոզիդներ, ֆլավոնոիդներ, վիտամին K, ասկորբինաթթու, դարբաղող նյութեր, պոլիսախարիդներ, ֆիտոնցիդներ և այլն</p>

9.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Եղինջ Եղինջ խայթող <i>Urtica urens</i> L. Եղինջ երկտուն <i>Urtica dioica</i> L.	
Բույսի հավաքվող մասը	Տերևը, ցողունը	
Տարեկան հավաքը կգ-ով	2	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է հիմնականում համայնքի հողերից, մայիս-օգոստոս ամիսներին, յուրաքանչյուր հանդիպածը՝ սեփական կարիքների համար: Օգտագործվում է թարմ վիճակում, որպես ուտելի բույս և դեղաբույս: Պահանջարկը միջին է:	
Ընդհանուր նկարագիրը	Ցողունն ուղղաձիգ է, քառանիստ, բարձրությունը՝ 1,5-2մ: Տերևները հակադիր են, սրտաձև, ձվանշտարաձև, սղոցա-եզր: Ծաղկաբույլը հուրանաձև է, ծաղիկները՝ երկտուն (կամ միատուն), մանր, կանաչավուն՝ խմբված տերևանույթներում: Սմբողջ բույսը ծածկված է կոշտ և այրող գեղձամազիկներով: Բազմանում է սերմերով: Եղինջազգիների ընտանիքին պատկանող, 60-170սմ երկարության բազմամյա խոտաբույս է: Ունի ձվանշտարաձև, ատամնաեզր հակադիր տերևներ, որոնք, ինչպես և ցողունը, ծածկված են գեղձային այրող մազիկներով: Վերջիններս շփվելով մաշկի հետ, մխրճվում են նրա մեջ ու բեկվում, դրանով իսկ իրենց պարունակած թույնը (ուրտիցին, հիստամին, մրջնաթթուն) լցնում այնտեղ, առաջ բերելով ուժեղ այրոցի զգացում: Ծաղիկները մանր են, միասեռ, կանաչ: Պտուղը փոքր ընկուզիկ է, արմատը՝ սողացող ու ճյուղավոր: Ծաղկում է հունիսից մինչև աշուն, պտղակալում՝ հուլիսից: Մեր հանրապետությունում հանդիպում է բոլոր գոտիներում, իր երկու տեսակներով՝ երկտուն և այրող, որոնք դեղորայքային առումով ունեն գրեթե նույն նշանակությունը: Բույսը աճում է սովորոտ տեղերում,	


	<p>խոնավ անտառներում, թփուտներում, բացատներում, տնամերձ հողամասերում, ցանկապատի մոտ և այլուր, հաճախ տալով հոծ, անանցանելի բուսուտներ: Եղինջը բազմանում է սերմերով և վեգետատիվ եղանակներով: Վատ է տանում երաշտը, քիչ զգայուն է ցրտի նկատմամբ:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Աճում է ամեն տեղ, չոր և խոնավ հողերում: Հայաստանում այն տարածված է գրեթե ամենուր, հատկապես առուների, գետերի և լճերի ափերին, խոնավ անտառներում, այգիների եզրերին, ճանապարհների երկայնքով, թփուտներում, տնամերձ հողամասերի, ցանկապատերի մոտ և հաճախ տալով մեծ ու անանցանելի բուսուտներ:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Պատրաստուկներն օգտագործում են որպես միզամուղ, խորխաբեր, հակաբորբոքային, արյունահոսությունը դադարեցնող, վերքերն ապաքինող միջոց: Երիտասարդ ընձյուղներն օգտագործում են սննդի մեջ: Տերևներից ստանում են կանաչ ներկ, ցողուններից՝ թել, որից պատրաստում են կոպիտ գործվածք, պարան և այլն: Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները, ծաղիկներն ու արմատը: Տերևները մթերում են բույսի ծաղկման ժամանակ, հնձում գերանդիով, թողնում, որ թառամի, որից խայթը հիմնականում կորչում է, այնուհետև չորացնում բացօթյա, լավ քամահարվող տեղում: Չոր հումքը մուգ կանաչ գույնի է, ունի թույլ հոտ, դառը համ: Այն պահում են տուփերի մեջ, 2 տարի տևողությամբ: Արմատը հանում են աշնանը, չորացնում արևի տակ և պահում պարկի մեջ: 10կգ թարմ տերևներից ստացվում է 2-3կգ չոր հումք:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Տերևներում հայտնաբերված են վիտամիններ՝ K, C (մինչև 269մգ %), B խումբ, կարոտին, կարոտինոիդներ, պանտոտենաթթու, ինչպես նաև մրջնաթթու, քլորոֆիլ (մինչև 5%), դաբադանյութեր (2 %-ից ավելի), խեժ, պրոտոպորֆիրին, կոպրոպորֆիրին, սիտոստերին, գլիկոզիդ, ուրտիցին, ֆիտոնցիդներ, կվերցետին, կոֆեինաթթու, ֆերուլաթթու, սիլիցիումաթթու, ագետիլիտոլին, հիստամին,</p>

	<p>քիմիական տարրերից՝ կալիում, կալցիում, երկաթ, սիլիցիում, քրոմ, պղինձ, մանգան, ալյումին, վանադիում և այլն: Պտուղները պարունակում են մինչև 32,5% ճարպայուղ: Բույսի մատղաշ տերևները 2 անգամ ավելի շատ վիտամին են պարունակում, քան հաղարջի պտուղները, իսկ կարոտինի պարունակությամբ եղինջը գերազանցում է գազարին, թրթնջուկին և չիչխանի պտուղներին:</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Միննույն տեղում եղինջը կարելի է մշակել 3-4 տարի, որից հետո դաշտը պետք է քանդել և կոճղարմատների վերատնկում կատարել: Խորհուրդ է տրվում եղինջի արտադրական դաշտեր հիմնել կոճղարմատներով բազմանալու միջոցով: Որպես բազմամյա բույս, եղինջը նաև ցրտադիմացկուն է: Ձմեռում են բույսի միայն կոճղարմատները: Վեգետացիայի ընթացքում կոճղարմատներում և ստորգետնյա բողբոջներում կուտակվում են մեծ քանակությամբ պահեստային նյութեր, որոնցով պայմանավորված է ապագ բերքը: Նպատակահարմար չէ եղինջը տեղադրել բանջարային և այլ ցանքաշրջանառություններում, թեև այն պահանջկոտ չէ հողի սննդատարրերի և ոչ էլ խոնավության նկատմամբ, սակայն փարթամ կանաչ զանգված կարող է առաջացնել խոնավությամբ ապահովված, խոր վարելաշերտով կավավազային մեխանիկական կազմ ունեցող հողերում: Նախացանքային աշխատանքները պետք է սկսել աշնանից, նախորդ մշակաբույսերից ազատված տարածքներում, խոր վարի և ըստ անհրաժեշտության նաև գոմաղբով պարարտացման միջոցով: Կոճղարմատները կարելի է տնկել աշնանը, որպեսզի գարնանը բերքն ավելի շուտ ստացվի և վաղ գարնանը, երբ հողը քեշի է: Եղինջը լավ է մշակել եռագծանի կամ հինգծանի ժապավեններով, շարքերի միջև թողնել 20սմ, իսկ ժապավենների միջև 45սմ տարածություն: Տնկելիս կոճղարմատները պետք է մասնատել այնպես, որ յուրաքանչյուր կտորի վրա լինի նվազագույնը 3-4 հանգույց (բողբոջ), որպեսզի յուրաքանչյուր բնից ստացվի նույնքան բույս: Վեգետացիայի հետագա տարիներին միննույն կոճղարմատի</p>

	կտորից կատացվեն կրկնակի ու եռակի բույսեր և արդեն երրորդ տարում միջբուսային տարածքը կծածկվի եղինջի բույսերով: Այդ պատճառով հետագա տարիներին, ըստ ամիրաժեշտության, նպատակահարմար է կատարել նոսրացում:
--	---

10.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Երիցուկ Երիցուկ դեղատնային Matricaria chamomilla	
Բույսի հավաքվող մասը	Ծաղիկը	
Տարեկան հավաքը կգ-ով	0,5	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Դեղաբույս է, հավաքվում է համայնքին պատկանող արոտավայրերից (խոտհարքներից) հունիս- սեպտեմբեր ամիսներին՝ սեփական կարիքները հոգալու համար: Օգտագործվում է չոր վիճակում: Հանդիպում է հազվադեպ, պահանջարկը միջին է:	
Ընդհանուր նկարագիրը	Պատկանում է աստղաձաղկազգիների ընտանիքին (Asteraceae): Միամյա հոտավետ բույս է: Ցողունը մերկ է, ուղղաձիգ կամ փոված: Տերևները նստադիր են, հերթադիր և փետրաձև կտրտված: Ծաղիկները սպիտակ են, կազմում են զամբյուղ ծաղկաբույլ: Նստած են ցողունի և ճյուղերի ծայրերին: Ծաղկում է մայիս-սեպտեմբեր ամիսներին, որը հավաքման ամենալավ ժամկետն է:	
Տարածվածությունը	Հայաստանում հանդիպում է ամենուր. Լոռի, Երևան, Վաղարշապատ և այլուր: Աճում է բնակավայրերի մոտ, բանջարանոցներում, ճանապարհների եզրերին:	

<p>Օգտագործումը</p>	<p>Դեղաբույս է, բժշկության մեջ օգտագործում են ջրային լուծույթների ձևով ողողումների համար՝ լնդերի բուժման դեպքում և հոգնայի համար: Հավաքված ծաղիկները նույն օրը բարակ շերտով փռում են ստվերում կամ չոր և օդափոխվող սենյակում, որտեղ նրանք շատ շուտ չորանում են: Հաստ շերտով ձմեռելու դեպքում ծաղիկները տաքանում են, փտում և կորցնում իրենց բուժիչ հատկությունները:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Բույսը պարունակում է սալիցիլաթթու, ասկորբինաթթու, դառնահամ նյութեր, ֆիտոստերին, դաբաղանյութեր, խոլին, եթերայուղ (մինչև 0,85%), որի կազմում կան մոտ 40 տարբեր տարբեր, այդ թվում խամազուլեն, բիսաբոլոլ և նրա օքսիդները, էն-ին-բիցիկլո եթերներ և այլն: Ինչպես նաև ստեարինային թթուների գլիցերիդներ, ֆլավոնային գլիկոզիդ, ումբելիֆերոն, դիօքսիկոմարին, շաքար, մոմ, յուղեր՝ լինոլեային, պալմիտինային, օլեինային:</p> <p>Ծաղկաբույլերը պարունակում են մոխիր՝ 10,57%, մակրոէլեմենտներ (մգ/գ)</p> <ul style="list-style-type: none"> • K-41,80, Ca-8,30, Mn-3,10, Fe-0,30 • Միկրոէլեմենտներ՝ Mg-0,29, Cu 0,78, Zn-0,80, CO-0,16, Cr-0,09 • Չի հայտնաբերված՝ Mo, Cd, Li, Au, Ag, Br • Խտացված ձևով կան՝ Zn, Cu, Se:


11.	
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	<p>Երիժնակ</p> <p>Եռչնակ (երիջնակ) դաշտային</p> <p>Eryngum campestre L.</p> <p>Երիժնակ հարթավայրային</p> <p>Eryngum billarderi</p> 
Բույսի հավաքվող մասը	Տերևները և ցողունը
Տարեկան հավաքը կգ-ով	2-4
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է համայնքին պատկանող արոտավայրերից (խոտհարքներից) հունիս-հուլիս ամիսներին: Ուտելի բույս է, օգտագործվում է թարմ վիճակում՝ սեփական կարիքների համար: Հանդիպում է հազվադեպ, պահանջարկը միջին է:
Ընդհանուր նկարագիրը	Նեխուրազգիների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույսեր են: Տերևներն ամբողջական են կամ մասնատված կաշվեկերպ, նշտարաձև, կլոր, հազվադեպ՝ գծաձև, սուր ստամանակներով: Ծաղկաբույլը կապտաերկնագույն գլխիկ է, շրջապատված երկար փշոտ թերթերից կազմված ծածկոցով: Ծաղիկները երկսեռ են, մանր: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Պտուղը հասկաձև է, պատված սպիտակ թեփուկներով:
Տարածվածությունը	Տարածված են ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և այլ մարզերում: Աճում են ենթալպյան մարգագետիններում, չոր, քարքարոտ լանջերին, անտառեզրերին: Երիժնակ վանատուրին E. wanaturii հանդիպում է Արագածոտնի և Վայոց ձորի քարքարոտ լանջերին, թփային մացառուտներում, գրանցված է Կարմիր գրքում:
Օգտագործումը	Օգտագործվում են որպես միզամուղ, մաշկի, շնչառական օրգանների և այլ հիվանդությունների ժամանակ: Նաև ուտելի բույս է:

Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է ածխաջրեր, սապոնիններ, օրգանական թթուներ, եթերայուղեր, կուլմարիններ և այլն:
-----------------------------	--


12.	Խնջլու
Բույսի ժողովրդական անվանումը	Խնջլու (Հնջլոզ) <i>Ornitogalum brachystachys</i>
Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	
Բույսի հավաքվող մասը	Արմատը
Տարեկան հավաքը կգ-ով	2-4
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է համայնքի հողերի արոտավայրերից, ապրիլ-մայիս ամիսներին: Ուտելի բույս է, օգտագործվում է թարմ վիճակում՝ սեփական կարիքների համար: Պահանջարկը փոքր է, հազվադեպ է հանդիպում:
Ընդհանուր նկարագիրը	Շուշանազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս է: Նշտարաձև, լայնավուն տերևներով, կապույտ ծաղիկներով: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին:
Տարածվածությունը	Հայաստանում հանդիպում է Ջրվեժում, Ողջաբերդում, Գառնիում, Գեղարդում, Կապանում, Եղեգնաձորում, Երևանի շրջակայքում: Աճում է չոր, քարքարոտ, խոտածածկ լանջերում, թփուտներում:
Օգտագործումը	Հավաքում են սոխուկներով, վաղ գարնանը, մինչև ծաղկելը: Օգտագործում են եփած վիճակում:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Համարվում է թունավոր բույս:

13.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Կապար Կապար փշոտ <i>Capparis spinosa</i> L.	
Բույսի հավաքվող մասը	Տերևը, ցողունը, պտուղը	
Տարեկան հավաքը կգ-ով	10-12	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Հավաքվում է արոտավայրերից համայնքի և հավաքողի համար անհայտ պատկանելիության հողերից՝ մայիս-հունիս և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Օգտագործվում է որպես ուտելի բույս և դեղաբույս թարմ և պահածոյացված: Բույսի պահանջարկը միջին է: Հանդիպում է հազվադեպ, առանձին վայրերում:	
Ընդհանուր նկարագիրը	Կիսաթուփ է, փոված բազմաթիվ ցողուններով, երկարությունը մինչև 3մ: Տերևները կոթունավոր են, հերթադիր, ամբողջական, կոշտ, փշանման տերևակիցներով: Ծաղիկները տերևակոթունավոր են, մեկական, սպիտակ կամ բաց վարդագույն: Ծաղկում է հունիսից մինչև ուշ աշուն: Պտուղը հակադիր ձվաձև, բազմասերմ, կարմրավուն միջուկով հատապտուղ է:	
Տարածվածությունը	ՀՀ-ում տարածված է ամենուրեք՝ կիսաանապատային, քարքարոտ, ժայռոտ, գիպսակիր, թույլ աղուտ հողերում, երբեմն առաջացնում է ինքնուրույն համակեցություններ:	
Օգտագործումը	Դեղաբույս լինելուց բացի, նաև մեղրատու և ուտելի բույս է: Ժողովրդական բժշկության մեջ պատրաստուկներն օգտագործում են ռևմատիզմի և բրուցելյոզի, նստանյարդաբորբի ժամանակ: Կոկոններից և մատղաշ ընձյուղներից պատրաստում են մարինադ:	

	Նուրբ ցողունները հավաքում են ապրիլից սկսած, իսկ ծաղկակոկոնները մայիս- հունիս ամիսներին:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է սապոնիններ, գլիկոզիդներ, վիտամին C, ակլալոիդներ, ներկանյութեր: Սերմերը պարունակում են մինչև 36% կարմրավուն ճարպայուղ:

14.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Կատվախոտ Կատվախոտ դեղագործական Valeriana officinalis L.	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը	
Տարեկան հավաքը կգ-ով	0,02	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Դեղաբույս է, հավաքվում է համայնքին պատկանող արոտավայր (խոտհարքից)՝ մայիս-օգոստոս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը՝ սեփական կարիքների համար: Օգտագործվում է թարմ և չորացած վիճակում: Բույսի պահանջարկը միջին է, բույսը հանդիպում է զանգվածային, առանձին վայրերում:	
Ընդհանուր նկարագիրը	Պատկանում է կատվախոտազգիների ընտանիքին: Բազմամյա խոտաբույս է ուղիղ ցողունով և ամբողջական կամ փետրածև կտրտված տերևներով: Ծաղիկները երկսեռ են, մանր, հովանոցաձև: Լինում են վարդագույն կամ բաց մանուշակագույն, երբեմն էլ համարյա սպիտակ: Ծաղկում են հունիս-հուլիս ամիսներին:	
Տարածվածությունը	Հեշտությամբ հարմարվում է ամենատարբեր վայրերին: Չնայած լայն տարածվածությանը, հազվագյուտ է մեծ թփուտներ առաջացնում: Հայստանում աճում է՝ Արզնիում, Սևանում, Կոտայքում, Իջևանում,	

	<p>Մարտունիում, Ստեփանավանում, Վայքում, Կապանում, Մեղրիում, Կիրովականում, Սպիտակում, Տաշիրի անտառներում, արտավայրերում, խոնավ մարգագետիններում, թփուտների մեջ, բարձր լեռներում՝ մինչև 2300մ բարձրությունների վրա:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Դեղատու և մեղրատու բույս է: Որպես դեղաբույս օգտագործվում է շատ վաղուց: Նրա բուժիչ նշանակության մասին գրել են Ամիրդովլաթը, Ավիցեննան, Դիոսկորիդը, Պլինիոսը: Այն օֆիցինալ է 24 երկրներում: Այն Վոլոկորդինի, կովալուլի, կարդիովալենի, ժենշենի կաթիլների բաղադրիչ մասն է կազմում: Օգտագործում են արմատները, հավաքում են օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, երբ բույսը 2 տարեկան է և ավելի: Հանում են արմատները, լվանում սառը ջրով, մաքրում, չորացնում արևի տակ, հետո ստվերում: Որքան շատ չորացվի, այնքան արմատներն ավելի անուշահոտ և արժեքավոր կլինեն: Արմատի հյութն օգտագործում են անքնության, ներոզների, սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների, միգրենի, գլխացավերի և այլ հիվանդությունների՝ էպիլեպսիայի, անքնության, հիստերիայի և սաստիկ ցավերի ժամանակ: Օգտագործվում են նաև կոճղարմատները: Կատվախոտի պահանջն այնքան մեծ է, որ թեպետ ունի լայն տարածում, բայց որոշ երկրներում այդ բույսը մշակվում է:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Կոճղարմատում և արմատներում հայտնաբերված է 0,5-2% բնորոշ վալերիանայի հոտով եթերայուղ, որը պարունակում է վալերիանա - բորնեոլայի եթեր, իզովալերիանաթթու, բորնեոլ, միտրենոլ, կամֆեն, պինեն, տերպինեոլ, լիմոնեն, սեսկվիտերպեններ, սպիրտ, մրջնաթթու, քացախաթթու, կարազաթթու, ինձորաթթու, ստեարինաթթու, պալմիտինաթթու, այնուհետև՝ ալկալոիդներ (վալերին և խատինին), գլիկոզիդ վալերիդ, դաբաղանյութեր, շաքար, քիմիական տարրերից՝ կալիում, կալցիում և մագնեզիում, օսլա, խեժ և այլն:</p>

15.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Կանգար Կանգար տուրնեֆորի Gundelia tournefortii L.	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևը	
Տարեկան հավաքը կգ-ով	5-15	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտելի է: Հավաքվում է ցանքատարածքների և արոտավայրի (խոտհարքների) համայնքային և հավաքողի համար անհայտ պատկանելիության տարածքներից՝ մայիս-հունիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը: Օգտագործվում է պահածոյացված վիճակում՝ սեփական կարիքների համար: Պահանջարկը միջին և փոքր է: Հանդիպում է հազվադեպ կամ գանգվածային առանձին վայրերում:	
Ընդհանուր նկարագիրը	Պատկանում է աստղաձևավորների (բարդաձևավորների) ընտանիքին: Բազմամյա է, ունի 60սմ բարձրություն: Ցողունը հաստ է ու կոշտ: Տերևները՝ խոշոր, կոշտ ու փշոտ: Ծաղկաբույլը՝ զամբյուղ է, սերմերը՝ խոշոր, փշոտ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:	
Տարածվածությունը	Տարածված է Եղեգնաձորի տարածաշրջանում, «Էրեբունի» արգելոցում, Ողջաբերդում, Ջրաշենում, Զովաշենում, Հացավանում, Գառնիում և Կոտայքի մարզում: Աճում է չոր լանջերին:	
Օգտագործումը	Երիտասարդ ընձյուղներն օգտագործում են վաղ գարնանը թարմ վիճակում և թթու դրած:	

16.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Հալիվորուկ Հալիվորուկ ռոմբատերև Senecio rhombifolium	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը տերևներով	
Տարեկան հավաքը կգ-ով	35-60	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է կամ նույնիսկ ավելի շատ	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտելի է, համեմատաբար մեծ պահանջարկ ունի: Հավաքվում է ցանքատարածքներից, համայնքին պատկանող արոտավայր/խոտհարքներից և այլ պատկանելիության հողերից՝ մարտ-ապրիլ ամիսներին և ապրիլ-մայիս ամիսներին: Սովորաբար հավաքվում է ընտրողաբար, երբեմն էլ յուրաքանչյուր հանդիպածը: Հիմնականում արմատախիլ է արվում: Օգտագործվում է սեփական կարիքների կամ շուկայում վաճառքի համար; Հանդիպում է զանգվածային:	
Ընդհանուր նկարագիրը	Պատկանում է աստղածաղկազգիների ընտանիքին (Asteraceae): Բազմամյա խոտաբույս է, տերևները մանր, ձվաձև կամ նշտաբաձև, ասամնաեզր, հերթադիր: Ծաղիկները մանր են ու դեղին: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին, պտուղները հասունանում են հուլիս-սեպտեմբեր ամիսներին:	
Տարածվածությունը	Աճում է Սպիտակի, Սևանի, Կիրովականի, Դիլիջանի շրջաններում՝ հարուստ և խոնավ հողերում:	
Օգտագործումը	Բուժական նշանակություն ունեն արմատն ու կոճղարմատը: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին հանում են արմատները, մաքրում, լվանում սառը ջրով և չորացնում բացօթյա՝ քամհարվող տեղում: Հավաքում են երկու և ավել տարիք ունեցող բույսերը: Որպես դեղաբույս օգտագործվում է շատ վաղուց: Ամիրդովլաթն այն օգտագործել է	


	<p>որպես ցավը հանգստացնող, քնաբեր միջոց: Օգտագործվում են չբերության դեպքում, ուռուցքը բուժելու համար: Չոր զանգվածը կարագի հետ տրորված օգտագործում են կրծքագեղձի բորբոքման, մաշկային թարախային ախտահարումների, իսկ հյուսթ՝ ճիճվակրության, հիստերիկ ցնցման ժամանակ: Ամբողջ բույսն օգտագործվում է պլատիֆիլին ակալոիդ ստանալու համար, որը կլինիկական պրակտիկայում օգտագործում են խոցային հիվանդությունների, բրոնխիալ ասթմայի, հիպերտոնիկ հիվանդությունների ժամանակ, աչքի բիբը լայնացնելու և հատակը զննելու համար:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է պլատիֆիլին ակալոիդ:</p>

<p>17.</p>	<div data-bbox="1680 619 2101 917" data-label="Image"> </div> <p>Ճարճարտուկ Ճարճարտուկ սովորական (եղերդ, այծխոտ, ցիկորի) Cichorium intybus L.</p>
<p>Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>	
<p>Ընդհանուր նկարագիրը</p>	<p>Դասվում է բարդածաղկավորների ընտանիքին: Բազմամյա բույս է, 30-120սմ բարձրությամբ: Ներքևի տերևները հավաքված են արմատամերձ վարդակի մեջ: Դրանք փետրաբաժան են, իսկ վերինները՝ լայնացած: Արմատը մսոտ է, ունի դառը համ, 1,5մ խորությամբ: Ծաղկաբույլը զամբյուղ է, ծաղիկները՝ լեզվակային: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, բազմանում է սերմերով: Մեղրատու է և դեղատու:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Հանդիպում է ամենուրեք: Աճում է ճանապարհների մոտ, աղուտներում, դաշտամերձ և առուների մոտակայքում: Պահանջկոտ չէ հողի նկատմամբ, լավ է դիմանում երաշտին ու ցրտին:</p>


<p>Օգտագործումը</p>	<p>Դեռևս Ավիցեննան, Միսիթար Հերացին, Ղ.Ալիշանը, Ամիրդովլաթը գրել են այս բույսի բուժական նշանակության մասին: Հին Եգիպտոսում և Հռոմում այն օգտագործել են որպես մարսողությունը լավացնող միջոց: Բուժական նպատակով օգտագործում են ամբողջ բույսը, սակայն հիմնականում՝ արմատները: Վերգետնյա մասը հավաքում են ամռանը, ծաղկման ընթացքում, չորացնում արևի տակ, մանր կտրատում և պահում տուփերի մեջ: Արմատը հանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, մաքրում հողից, կտրատում և իսկույն չորացնում: Պատրաստի հումքը պահում են չոր տեղում: Օգտագործում են ստամոքսաաղիքային տրակտի, լյարդի, լեղապարկի, փայծաղի, միզուղիների, լնդախտի, ճիճվաթափության, ջերմերի, գլխացավի, շաքարախտի, աչքերի և ոսկրային հիվանդությունների դեմ: Որպես բուժական բույս, հայտնի է Միջին Ասիայում, Իրանում, Կովկասում, Ուկրաինայում, Բուլղարիայում, Ավստրիայում:</p> <p>Արմատից ստացված օշարակն օգտագործում են հրուշակեղենի, պահածոների և սուրճի արտադրությունում: Արմատամերձ վարդակային տերևներից պատրաստում են աղցաններ:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է ինուլին, կարոտին, ճարպեր, գլիկոզիդներ, կաուչուկ, խեժեր, արգինին, դաբաղանյութեր, եթերայուղեր, շաքար, թթուներ, վիտամիններ՝ C, B և այլն:</p>

18.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Ճնճղապաշար Ծտապաշար (Ճնճղապաշար, հովվամաղախ, Ճնճղաբլիթ) Caspella bursa pastoris L.	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը տերևներով	
Տարեկան հավաքը կգ-ով	2	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտել բույս է: Հավաքվում է համայնքային հողերից ապրիլ-մայիս ամիսներին, յուրաքանչյուր հանդիպածը: Թարմ վիճակով օգտագործվում է սեփական կարիքների համար: Պահանջարկը փոքր է, աճում է զանգվածային՝ առանձին վայրերում:	
Ընդհանուր նկարագիրը	Պատկանում է կաղամբագգիների ընտանիքին (Brassicaceae): Միամյա է, բարակ, ուղիղ, մի փոքր ճյուղավորված ցողունն իր վրա է կրում ակոսավոր և աստամնավոր կտրտվածքներով տերևներ և մանր սպիտակ ծաղիկներ՝ ճյուղավորվածությունների վերջում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին:	
Տարածվածությունը	Տարածված է ցածրադիրից մինչև բարձրադիր լեռնային շրջաններում: Աճում է դաշտերում, բանջարանոցներում, այգիներում, ճանապարհներին եզրերին, անմշակ տեղերում՝ որպես մոլախոտ:	
Օգտագործումը	Օգտագործում են սննդի մեջ (տապակա), կարելի է ուտել նաև հում վիճակում: Մեղրատու է: Բժշկության մեջ օգտագործվում է որպես արյունահոսությունը դանդաղեցնող և նյութափոխանակությունը կարգավորող միջոց: Հյութն օգտագործում են որպես ցավազրկող, նյարդերը հանգստացնող, մաշկային վնասվածքները բուժող միջոց:	

Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է դաբաղանյութեր, խնձորաթթու, լիմոնաթթու, ֆումարաթթու, գինեթթու, քոլին, ացետիլքոլին, տիրամին, վիտամիններ՝ C, K, A1, B1, ֆիտոցիդներ: Սերմերում կան ճարպայուղեր և ալիլմանանեխային յուղեր:
-----------------------------	--

19.	 <p>Մարիամխոտ Մարիամխոտ (լերդախոտ, գարռո, գոտնակաղնի, կենարար) Teucrium polium</p>
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը տերևներով և ծաղիկներով
Տարեկան հավաքը կգ-ով	0,5-2
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Նվազել է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Բավականին մեծ պահանջարկ ունեցող դեղաբույս է, հավաքվում է արոտավայր/խոտհարքներից, սարերից, ազատ տարածքներից: Հավաքվում է մայիս-հունիս, հունիս-սեպտեմբեր ամիսներին՝ 15-օրյա ընդմիջումներով: Հավաքվում է սեփական կարիքների համար՝ յուրաքանչյուր հանդիպածը կամ ընտրողաբար: Օգտագործվում է թարմ կամ չորացած վիճակում՝ որպես թեյ: Պահանջարկը միջին է կամ փոքր: Հազվադեպ է հանդիպում:
Ընդհանուր նկարագիրը	Շրթնաձաղկավորների ընտանիքին պատկանող բազմամյա բույս է՝ հիմքում խիստ փայտացած, 15-30սմ բարձրությամբ, ճյուղավոր ցողուններով: Տերևներն ունեն հակադիր դասավորվածություն: Ծաղիկները խմբված են ցողունների գագաթին: Ծաղկեպսակը սպիտակ է, բույսն ընդհանուր առմամբ մոխագույն է: Բույսից նարդոսի անուշ հոտ է գալիս: Ծաղկում է հունիսին:

Տարածվածությունը	Երևանի ֆլորիստիկ մարզերում հանդիպում են 4 տեսակներ: Տարածված է բոլոր շրջաններում՝ հատկապես հարավում: Աճում է խոնավ մարգագետիններում, թփուտներում և գետափերին:
Օգտագործումը	Դեռևս Ամիրդովլաթը, Մխիթար Հերացին, Ղ.Ալիշանը գրել են այս բույսի բորժիչ նշանակության մասին: Հատկապես օգտագործում են կանացի հիվանդությունների բուժման ժամանակ: Բույսը հավաքում են ծաղմնա շրջանում, չորացնում ստվերում: Բուժահումք է հանդիսանում բույսի վերգետնյա հատվածը:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է ֆիտոցիդներ, յուրահատուկ հոտով յուղեր:

20.	
<p>Բույսի ժողովրդական անվանումը</p> <p>Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>	
Բույսի ժողովրդական անվանումը	Շուշանբանջար,
Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	<p>1. Մանդակ, շուշան Շուշանբանջար պալարակիր (մանդակ, քեղակարոս, դմի կովկասյան) Chaerophyllum bulbosum</p> <p>2. Շուշանբանջար ոսկեգույն (աղքատի բանջար, աղքատի մանդակ, փնզի) Chaerophyllum aureum L.</p>
Բույսի հավաքվող մասը	Բույսն ամբողջությամբ կամ միայն արմատը
Տարեկան հավաքը կգ-ով	20-40
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է կամ ավելացել է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտելի բույս է, հավաքվում է հավաքողի համար անհայտ պատկանելիության արոտավայր/խոտհարքներից, ապրիլ-մայիս, մայիս-հունիս ամիսներին: Բույսը հանվում է արմատով:

	<p>Օգտագործվում է թարմ կամ պահածոյացված՝ սեփական կարիքների և շուկայում վաճառքի համար: Պահանջարկը մեծ է: Հանդիպում է հազվադեպ կամ զանգվածային՝ առանձին վայրերում:</p>
<p>Ընդհանուր նկարագիրը</p>	<p>Երկամյա խոտանման բույս է: Վեգետացիայի առաջին տարում ձևավորվում է տերևային վարդակ, երբեմն նաև ծաղկացողուններ, իսկ հիմնականում դրանք առաջանում են երկրորդ տարում: Տերևները եռանկյունաձև են, փետրաձև, ստորին տերևները երկարավուն, նշտարաձև: Վեգետացիայի առաջին տարվա վարդակն ունի խիտ, հավաք, բայց փոփած տեսք: Այն ևս պիտանի է սննդի մեջ օգտագործման համար: Վեգետացիայի երկրորդ տարում, վարդակը ձևավորվելուց հետո, առաջանում են ծաղկացողուններ, որոնք երիտասարդ հասակում նուրբ են և սննդում օգտագործման համար սպիտակ են: Մինչ վեգետացիայի ավարտը, ցողունները հասնում են 90-100սմ երկարության և ավարտվում բարդ հովանոց ծաղկաբույլերով: Վեգետացիայի երկրորդ տարում արմատների վրա ձևավորվում են պալարիկներ:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Աճում է Հայաստանի անտառածածկ շրջաններում: Արարատյան դաշտի այգիներում, նախալեռնային գոտում, հիմնականում գետափերին, թփուտներում, մարգագետիններում՝ ընդգրկելով ՀՀ գրեթե բոլոր մարզերը ծ/մ մինչև 2300մ բարձրություններում:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Հայաստանում շուշանբանջարի և վարդակն են օգտագործում, և երիտասարդ ծաղկացողունները, որոնք հավաքում են ապրիլ-մայիս ամիսներին: Դրանք կարելի է օգտագործել եփած կամ թթվեցված ձևով:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է չոր նյութեր, ածխաջրեր, վիտամիններ՝ A, C:</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Շուշանբանջարը (ղմի, շնախոտ, քեղակարոս, շիշվիկ) ներկայումս վայրի վիճակում շատ է տարածված և լայն կիրառություն ունի ժողովրդական սննդի մեջ: Ուստի նրա կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս և էլ ավելի առաջնահերթ են դարձնում շուշանբանջարի արտադրական ցանքերի ստեղծումը:</p>

Շուշանբանջարին հատկացվող հողամասը լավ է նախապատրաստել նախորդ աշնանից՝ կատարելով խորը վար (25-30սմ), իսկ այդ անհրաժեշտ է նախապես հողը գոմաղբով հարստացնել 30-40տ/հա նորմայով: Շատ ավելի բարենպաստ է, երբ գոմաղբի հետ տրվում է նաև սուպերֆոսֆատ և կալիումական աղ, իսկ վեգետացիայի ընթացքում նաև ազոտական պարարտանյութերով սնուցում: Ցանքադաշտի խնամքի աշխատանքներից է փխրեցումը, որը վեգետացիայի ընթացքում կրկնվում է 2-4 անգամ: Կարևոր միջոցառումներից են նաև ցանքի նոսրացումները, որոնք կատարվում են երկու նվազով. առարինը՝ երբ կազմավորվել է 2-րդ իսկական տերևը, իսկ երկրորդը՝ առաջին նոսրացումից 15 օր հետո, որի ժամանակ միջբուսային տարածություն է արվում մինչև 7սմ: Հանած բույսերը եթե լավն են, կարելի է օգտագործել սննդի մեջ:

Բերքահավաքը կատարում են դանակներով՝ ցողունները կտրելով և խրձեր կապելով:

Սերմեր ստանալու համար ծաղկացողունները գարնանը չեն կտրում: Դաշտի մշակությունը կատարվում է նույն ձևով, ինչ արտադրական ցանքերինը: Միայն այստեղ սերմերի հասունացումից հետո ծաղկացողուններն ընտրողաբար կտրում են, խրձերի ձևով չորացնում և կալսում, քամհարում: Մեկ հեկտար շուշանբանջարի սերմնադաշտից կարելի է ստանալ միջինը 5-6կգ սերմ:

21.	<p>Մասուր</p> <p>Մասրենի, վարդենի Rosa L.</p>	
<p>Բույսի ժողովրդական անվանումը</p> <p>Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>		
Բույսի հավաքվող մասը	Պտուղը	
Տարեկան հավաքը կգ-ով	20-35	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Ավելացել է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	<p>Դեղաբույս է: Յուրաքանչյուր հանդիպած պտուղը հավաքվում է համայնքային արոտավայր/խոտհարքներից՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Հավաքվում է շուկայում վաճառելու, սեփական կարիքների համար: Օգտագործվում է թարմ և չորացած վիճակում: Հանդիպում է զանգվածային առանձին վայրերում:</p>	
Ընդհանուր նկարագիրը	<p>Պատկանում է վարդագզիների ընտանիքին: Ոչ մեծ՝ 1-1,5մ բարձրության թուփ է (պատահում է մինչև 3մ բարձրության) սպիտակ կամ վարդագույն ծաղիկներով: Ունի բարակ, կարմրամանուշակագույն ճյուղեր: Հին ճյուղերը գորշ շագանակագույն են: Ընձյուղի վերևի մասում փշերը քիչ են, իսկ ներքևի մասն ու չժողկող ընձյուղները ծածկված են բավական խիտ, ուղիղ փշերով: Տերևները բարդ են՝ կենտ-փետրաձև կտրտված, ունեն 5-7 զույգ բավականին խոշոր (5-6սմ) ատամնաեզր, թավուտ տերևիկներ: Ծաղկում են մայիս-հուլիս ամիսներին: Ծաղիկները կանոնավոր են, միայնակ, խոշոր, ունեն 5 վարդագույն ազատ պսակաթերթեր և հնգաթերթ ծաղկեպսակ, առեջները բազմաթիվ են: Պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:</p>	
Տարածվածությունը	<p>Հայաստանում հանդիպում են մասրենու 13 տեսակներ: Տարածված է ամենուրեք: Աճում է գետերի, ջրամբարների ափերին, անտառի բացատներում, թփուտներում, հատված անտառներում:</p>	

<p>Օգտագործումը</p>	<p>Պտուղներն օգտագործում են թեյի մեջ: Դեղատու և մեղրատու բույս է: Բուժման նպատակով օգտագործում են պտուղը, ծաղիկները, տերևները, կեղևը և արմատները: Ծաղիկները և արմատները հավաքում են բույսի ծաղկման շրջանում, չորացնում հով տեղում՝ միջանցիկ քամու տակ: Բացի թարմ վիճակում օգտագործելուց՝ պտուղներից պատրաստում են հյութ, վիտամինային օշարակ, մածուկ, կոմպոտ, կիսել, մուրաբա, մարմելադ, սննդի արդյունաբերության մեջ՝ կոնֆետ, թմրօղի, գինի: Ջրագուլորչային թորման եղանակով ծաղկից ստացվում է հատուկ յուղ, որը լայն կիրառում ունի պարֆյումերիայում և բժշկության մեջ: Մասրենին ունի հողապաշտպան և հակաերոզիոն նշանակություն: Պտուղները կեր են ձմեռող թռչունների համար: Ծաղիկը մեղրատու է:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Ծաղկափոշին պարունակում է սպիտակուցներ, ածխաջրեր, վիտամիններ, ֆերմենտներ: Թարմ և չորացրած պտուղները պարունակում են ածխաջրեր, օրգանական թթուներ, սպիտակուցներ, վիտամիններ՝ C, PP, B1, B2, K, E, P և պրովիտամին A: Հանքային աղերից հայտնաբերվել են կալիում, կալցիում, ֆոսֆորի, երկաթի և մանգանի աղեր: Պտուղները պարունակում են նաև պեկտին, դեքստրոզա, ինձորաթթու, եթերային յուղ, մեծ քանակությամբ դաբաղանյութեր:</p>

22.	
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Շամպինիոն 1. Բանջարային շամպինիոն <i>Psalliota campestris</i> 2. Դաշտային շամպինիոն <i>Psalliota arvensis</i> 3. Անտառային շամպինիոն <i>Psalliota silvestres</i> 4. Մարգագետնային շամպինիոն <i>Psalliota pratensis</i>
Բույսի հավաքվող մասը	Պտղամարմինը
Տարեկան հավաքը կգ-ով	կգ-ով
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	<p>Հավաքվում է Էրեբունի պետարգելոցից ապրիլ-մայիս, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անձրևներից հետո՝ շաբաթը 3 անգամ: Հավաքվում են առողջները՝ կտրվում է դանակով: Օգտագործվում են թարմ վիճակում՝ սեփական կարիքների և շուկայում վաճառքի համար: Պահանջարկը մեծ է: Հանդիպում է զանգվածային՝ առանձի վայրերում:</p>
Ընդհանուր նկարագիրը	<p>Շամպինիոնը սապրոֆիտ սունկ է, պատկանում է Agaricaceae ընտանիքի Basidiomycetes դասի Psalliota ցեղին և ենթաբաժանվում է մի քանի տեսակների, որոնք ընդգրկում են ուտելու համար պիտանի՝ թունավոր սնկեր: Շամպինիոնի վեգետատիվ մասը նրա թելիկներն են՝ միցելիումը, որը նպաստավոր պայմաններում առաջանում է սպորներից: Շամպինիոնի սպորները ծլելուց առաջացնում են բարակ թելիկներ, որոնք աստիճանաբար հասունանում են և կազմավորում բուն սնկամարմինը՝ միցելիումը, որից հետագայում առաջանում է սնկի պտղամարմինը: Ուտելու համար օգտագործվում է սնկի պտղամարմինը, որը բաղկացած է կոթունից և գլխարկից. վերջինս մատղաշ վիճակում կլորավուն է և փակ, նրա ստորին մասում</p>



	<p>դասավորված են թիթեղները, որոնց վրա առաջանում են սպորները: Դրանց հասունացման շրջանում պտղամարմնի գլխարկը բացվում է և սպորները թափվում են:</p> <p>Բնական պայմաններում շամպինիոնները բազմանում են սպորներով, որոնք գլխարկը բացվելուց հետո, համապատասխան սննդատու միջավայր ընկնելով (փտած տերևներ և բուսական մնացորդներ)՝ բավարար խոնավության 18-20°C ջերմության պայմաններում ծլում են և արագ զարգանում:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Ուտելու համար պիտանի շամպինիոններից առավել տարածված են</p> <ol style="list-style-type: none"> 1. Բանջարային շամպինիոն (<i>Psalliota campestris</i>) - պտղակոթը խիտ, սպիտակ գույնի, ներքևի մասում հաստացած: Շամպինիոնի լավագույն, համեղ և նուրբ մտով տեսակներից մեկն է: 2. Դաշտային շամպինիոն (<i>Psalliota arvensis</i>) - սա նույնպես ուտելի սունկ է, տարածված է հանդերում, անտառներում, և այգիներում: 3. Անտառային շամպինիոն (<i>Psalliota silvestres</i>) - տարածված է անտառներում: 4. Մարգագետնային շամպինիոն (<i>Psalliota pratensis</i>) - տարածված բարձր լեռնային մարգագետիններում:
<p>Օգտագործումը</p>	<p>Հավաքում են գարնան վերջին և աշնանը, հիմնականում առատ տեղումներից հետո, երբ դրանք նոր են ձևավորում իրենց պղարմատները: Շամպինիոնը թարմ վիճակում օգտագործվում է մի շարք ապուրներ, սոուսներ, աղցաններ և զարնիերներ, ինչպես նաև բարձորակ մարինադներ պատրաստելու համար:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Թարմ շամպինիոնը միջին հաշվով պարունակում է 3,9% սպիտակուց, 7,56% ազոտական թթուներ, 0,28% ճարպ և 1,04% մոխիր: Մոխրի մեջ գերակշռող տեղ են գրավում K₂O-ն և P₂O₅-ը:</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Շամպինիոն կարելի է աճեցնել ամբողջ տարվա ընթացքում: Նրա աճի և զարգացման բիոլոգիական ցիկլի շնորհիվ (90 օր)՝ տարեկան կարելի է 3 անգամ բերք ստանալ, ընդ որում՝ 1 ցիկլի ընթացքում օգտակար մակերեսից ստացվում է 15-25կգ սունկ: Բերքատվությունը</p>

շատ բարձր է: Շամպինիոնը աճման պայմանների նկատմամբ բավականին պահանջկոտ է, շատ կարևոր է օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության որոշակի չափանիշների պահպանումը, ուժեղ լուսավորվածությունը բացասաբար է ազդում նրա աճի վրա, քանի որ ուժեղ լույսի ազդեցության հետևանքով տաքանում է օդը, հետևաբար՝ պակասում է նրա հարաբերական խոնավությունը: Բացի այդ՝ լույսը խթանում է այնպիսի վնասատուների աճին ու բազմացմանը, ինչպիսին են սնկային մոծակները և ճանճերը:

Սերմերի աճեցում: Սնկամարմնի (միցելի) աճեցման համար բավարար ջերմաստիճան է համարվում +22-ից +260C ջերմաստիճանը, իսկ բերքատվության ժամանակ՝ +16-ից +200C-ը: Մնուցող միջավայրը՝ սուբստրատը կամ կոմպոստը, պետք է ունենա 45-50% խոնավություն: Շատ կարևոր է թարմ և մաքուր օդի առկայությունը՝ հատկապես պտղի կազմավորման ընթացքում: Արտադրամասում ածխաթթու գազի 0.2% և ավելի կոնցենտրացիայի մեծացումը վատթարացնում է պտղամարմնի որակը և նույնիսկ՝ դադարեցնում է պտղագոյացումը: Հետևաբար՝ մաքուր և թարմ օդը երաշխիք է՝ շամպինյոնի բարձր բերք ստանալու համար: Շամպինիոնի աճեցման արտադրական ցիկլը բաղկացած է հետևյալ գործընթացներից՝

1. Կոմպոստի պատրաստում հատուկ շինությունում կամ բացօթյա տարածքում


- Կոմպոստի ինքնաբերական խմորում (ֆերմենտացիա)
- Կոմպոստի տեղափոխումը լցումը ստելաժների վրա՝ հատուկ

	<p>արկղերի կամ պարկերի մեջ</p> <ul style="list-style-type: none"> • Կոմպոստի վարակազերծում և հետագա հովացում՝ դրանով իսկ ավարտելով վերահսկման պայմաններում կոմպոստի պատրաստումը <ol style="list-style-type: none"> 2. Մնկամարմնի ցանում 3. Մնկամարմնի ծլումը կոմպոստի մեջ 4. Ծածկույթաշերտ հողի պատրաստում և լցնում կոմպոստի մակերեսի վրա, միջելի ծլումը ծածկույթաշերտի մեջ 5. Շամպինիոնի աճեցում և բերքահավաք 6. Արտադրամասի նախապատրաստում հաջորդ ցիկլին <p>Կոմպոստի պատրաստում: Շամպինիոնի արտադրության մեջ բարձրորակ կոմպոստի պատրաստման համար հիմնական բաղադրիչը հանդիսանում է ձիերի կիսաքայքայված ցամքարային գոմաղբը: Այն կարելի է փոխարինել տավարի կամ ոչխարի գոմաղբով, ինչպես նաև թռչնաղբով: Կարելի է օգտագործել նաև սինթետիկ և կիսասինթետիկ կոմպոստներ: Սինթետիկ կոմպոստի մեջ ձիու գոմաղբն իսպառ բացակայում է, իսկ կիսասինթետիկի մեջ այն կազմում է 10-20%: Պրակտիկ գործունեության արդյունքում պարզվել է, որ բարձրորակ կոմպոստի համար լավագույնը հացահատիկային մշակաբույսերի՝ հատկապես ցորենի ծղոտն է: Այն պարունակում է մեծ քանակությամբ ածխաջրեր, կալցիում և այլ տարրեր: Ծղոտում լավ է կատարվում օդի ներթափանցումը, սակայն անհրաժեշտ միկրոֆլորայի բացակայության հետևանքով դանդաղ է ընթանում ֆերմենտացման գործընթացը: Այդ պատճառով շամպինյոնի բարձր բերք ստանալու համար՝ կոմպոստ պատրաստելիս ծղոտի հետ խառնում են անհրաժեշտ</p>
--	---

քանակությամբ գոմաղբ կամ թոչնաղբ և այլ օրգանական ու հանքային նյութեր:

Մնկամարմնի ցանումը: Շամպինիոնի աճեցման համար որպես սնկամարմին օգտագործվում է միցելիյը: Պատրաստի միցելիյը պահում են սառնարաններում մինչև +20C-ի ռեժիմով: Ցանելուց մեկ օր առաջ հանում են՝ պահելով սենյակում, որի ջերմաստիճանը աստիճանաբար բարձրացնում են մինչև +100C: Ստելաժներում միցելիյի ցանքի ժամանակ սերմի նորմայի 80%-ը ցանում են կոմպոստի մեջ՝ 12-15սմ, իսկ մնացած 20%-ը ցրում են կոմպոստի մակերեսի վրա՝ այն հարթեցնելով և հավասարեցնելով: Ցանքից հետո կոմպոստի մակերեսը ծածկում են խոնավացած թղթերով՝ զանգվածը չորանալուց զերծ պահելու նպատակով, հետագայում անընդհատ ջրում են ցնցուղով՝ պահպանելով խոնավությունը: Միցելիյի ծլման համար կոմպոստի նպաստավոր ջերմաստիճանը +25 +270C-ն է, օդի ջերմաստիճանը՝ +21-ից +250C, իսկ օդի հարաբերական խոնավությունը՝ 95%: Այդ պայմաններում միցելիյի հախուռն ծլումը սկսվում է ցանքից 12-14 օր հետո: Միցելիսի ցանքից հետո 5-10 օրվա ընթացքում կոմպոստի վրա անհրաժեշտ է լցնել նախօրոք պատրաստված և վարակազերծված 2.5-3սմ հաստությամբ հողի շերտ: Ծածկույթաշերտի մեջ միցելիյի ծլելուց հետո օդի ջերմաստիճանը պետք է լինի +16-ից +180C, իսկ կոմպոստինը՝ +18-ից +20 0C: Շամպինիոնի պտղաբերության տևողությունը լինում է 5-7 շաբաթ: Այդ ընթացքում տեղ-տեղ աճած սունկն անհրաժեշտ է հավաքել, իսկ զանգվածային բերքատվությունը հաջորդաբար կրկնվում է 5-7 օրը մեկ: Բերքահավաքի ընթացքում ծածկույթաշերտը ցնցուղով մշտապես խոնավացնում են:


	<p>Բերքի հավաքումը: Այն կատարում են հետևյալ կերպ. սնկի գլխիկը թեթևակի սեղմում են կոմպոստի մեջ և կատարելով կես պտույտ՝ հանում են սունկը, իսկ գոյացած փոսում հող են լցնում: Արմատակալած պոչը դանակով կտրում են, հավաքված սունկը դասավորում արկղի մեջ: Բերքը ժամանակավորապես պահանում են սառնարանում՝ +2-ից +30C ջերմաստիճանի տակ: Տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել օդափոխիչ սարքով կահավորված, ծածկված թափքով ավտոտրանսպորտի միջոցով:</p>
--	---

23.		
<p>Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>	<p>Չիչխան Չիչխան դժնիկանման (լափոռի, ձիափշատ, փշարմավ) Hippophae rhamnoides L. sea-buckthorn, argousier m, Weiden-Sanddorn</p>	
Բույսի հավաքվող մասը	Պտուղը	
Տարեկան հավաքը կգ-ով	13-27	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
	Դեղաբույս է: Սննդի մեջ օգտագործվում է որպես հյութ: Հավաքվում է համայնքին պատկանող բազմամյա տնկարկներից: Հավաքվում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին յուրաքանչյուր հանդիպածը:	


<p>Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը</p>	<p>Օգտագործվում է սեփական կարիքների և շուկայում վաճառքի համար, պահածոյացված վիճակում: պահանջարկը մեծ է: Հանդիպում է զանգվածային՝ առանձին վայրերում:</p>
<p>Ընդհանուր նկարագիրը</p>	<p>Փշատագրիների ընտանիքին պատկանող ճյուղավոր ծառանման թուփ է, հասնում է 2-6մ բարձրության: Ունի մուգ կանաչ կամ մոխրագույն կեղև: Տերևներն ունեն կարճ տերևակոթուն, տերևաթիթեղը գծային է, նշտարաձև: Ծաղիկները մանր են, դեղին գույնի, հոտավետ: Պտուղները հյութալի կորիզապտուղներ են՝ սիսեռահատիկի չափ, նարնջագույն կամ դեղին գույնի, թթվաքաղցր համի, տեղավորված են ճյուղերի ծայրերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Տարածված է Սևանի ողջ ավազանում, Ախուրյանում, Կոտայքում, Իջևանում, Ապարանում, Սյունիքում, Երևանի շրջակայքում:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Կորիզներից ստանում են յուղ, որն ունի բուժիչ նշանակություն: Բուժման նպատակով օգտագործում են նաև պտուղներն ու տերևները: Պտուղները հավաքում են ձմռանը: Տերևները հավաքում են ամբողջ սեզոնում և չորացնում հով տեղում: Այն հայտնի է որպես աղեստամքոսային հիվանդություններն ապաքինող, ցավազրկող, հակաբորբոքային, հակալնդախտային միջոց: Պտուղների և տերևների եփուկն օգտագործում են մազաթափության և ճաղատության դեմ: Յուղն օգտագործվում է կլինիկական բժշկության մեջ՝ գինեկոլոգիական պրակտիկայում: Մենդի մեջ օգտագործում են պտուղները՝ գինի, թրմօղի, կոմպոտ, մուրաբա, կիսել, մրգահյութ ստանալու համար: Մեղրատու բույս է: Չիչխանը նաև մշակում են:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է E-(8-15մգ), B1-(0,35մգ), B2-(0,5 մգ), K-(1,2 մգ), P-(75-100մգ), կարոտինոիդներ - (մինչև 8,5մգ), PP-(14-25 մգ), խոլին-(B4), պիրիդոքսին-(B6), ասկորբինաթթու-(50-450մգ), ֆոլիաթթու-(0,79մգ, 100գր. պտղի մեջ), շաքար-(մինչև 8,5%), պեկտինային նյութեր-(0,3-0,4%), օրգանական թթուներ-(խնձորի, գինու, թրթնջուկի, սաթի 2,8%), ներկանյութ, դաբաղանյութ, ֆլավոնոիդներ (կվերցետին), կումարին,</p>

	<p>Ֆիտոնցիդներ: Պտղի մեջ հայտնաբերվել են միկրոտարբեր՝ երկաթ, բոր, տիտան, մանգան, ալյումին, մագնեզիում, կրեմնիում, որոնք շատ կարևոր են մարդու աճի և զարգացման համար</p>
<p>Մշակության տեխնոլոգիան և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Նպատակահարմար է չիչխանն աճեցնել բերքատու և բարձրորակ պտուղներ ունեցող մայրական բույսերից վերցված արմատամացառներով, կտրոններով կամ պատվաստի միջոցով, որոնք պտղաբերում են տնկումից 2-4 տարի հետո: Արմատակալման համար կտրոնները մթերում են ձմռան սկզբին կամ վաղ գարնանը՝ մինչև բողբոջների ուռչելը: Մթերում են լավ փայտացած միամյա շիվերը և պահում խոնավ ավազի մեջ, նկուղային հարկում՝ 0-ին մոտ ջերմաստիճանի պայմաններում: Գարնանը, երբ անցնում է ցրտահարության վտանգը, շիվերը բաժանում են 15-20սմ երկարության կտրոնների՝ հեռացնելով ծայրերը և 5մմ-ից բարակ շիվերը: Դրանից հետո կտրոնները պահում են ջրի մեջ՝ տնային ջերմաստիճանի պայմաններում, մոտ 10-12 օր, մինչև բողբոջների կանաչ կոնի երևալը: Լավ արմատակալներ ստանալու համար պետք է ընտրել ավազակավային հող և այն որակով նախապատրաստել: Կտրոններն արմատակալման պետք է դնել, երբ 15սմ խորության վրա հողի ջերմաստիճանը լինում է 50°C և ավելին: Նորմալ խնամքի պայմաններում արմատակալներն աշնան ունենում են 3-5 արմատ՝ մինչև 20սմ երկարության և 50-60սմ բարձրության ցողուն՝ 8-10մմ հաստությամբ: Այդպիսի արմատակալները կարելի է տնկել իրենց մշտական աճեցման համար ընտրված տեղայնքում՝ շարքը շարքից՝ 3մ, բույսը բույսից՝ 1,5մ հեռավորությամբ: Պետք է թույլ չտալ, որ երիտասարդ տնկարկները խտանան, հաճախակի հեռացնել մացառները, կտրել չորացած շիվերն ու ճյուղերը: Հին տնկիները պետք է հաճախակի երիտասարդացնել: Լավ խնամքի պայմաններում չիչխանը կարող է պտղաբերել 20-25 տարի: Ներկայումս չիչխանը հաջողությամբ աճում և պտղաբերում է Սևանի ավազանում, Լոռի-Փամբակում և հանրապետության այլ շրջաններում: Անհրաժեշտ է մշակության համար ընտրել տեղական լավագույն ձևերը, միաժամանակ բերել</p>

	<p>նան դրսից: Ներկայումս ստացվել են չիչխանի նոր, խոշորապտուղ, յուղով, կարոտինով, կենսամիներով և օրգանական թթուներով հարուստ սորտեր, սորտատիպեր ու ձևեր, որոնց մեկ հատիկի քաշը գերազանցում է 0,7-0,8գրամից, պտղակոթը 6-8մմ է, որը շատ կարևոր է բերքահավաքի ժամանակ: Ստացվել են չիչխանի անփուշ թփերի ձևեր:</p>
--	--


24.	<p>Հազարատերևուկ Հազարատերևուկ <i>Achillea millefolium</i></p>	
<p>Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>		
Բույսի հավաքվող մասը	Տերևը և ցողունը	
Տարեկան հավաքը կգ-ով	20-30	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	<p>Դեղաբույս կամ ուտելի բույս է: Հավաքվում է համայնքին պատկանող և հավաքողի համար անհայտ պատկանելիության արոտավայր/խոտհարքներից կամ ցանքատարածություններից: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպած բույսը՝ ապրիլ-մայիս, մայիս-հունիս ամիսներին: Օգտագործվում է սեփական կարիքների և շուկայում վաճառելու համար՝ թարմ և չորացած վիճակում:</p>	
Ընդհանուր նկարագիրը	<p>Բարդաձողկավորների ընտանիքին պատկանող մինչև 70սմ բարձրության բազմամյա բույս է: Ունի նուրբ և բարակ արմատ: Ցողունները սպիտակ են, ակոսավոր: Տերևները համարյա մերկ են, նեղ, գծային, փետրաձև կտրտված կամ բաժանված՝ սրածայր հատվածներով: Ծաղիկներն ունեն սպիտակ, երբեմն վարդագույն կամ դեղին գույն: Բույսը սովորաբար չի ճյուղավորվում, ունի</p>	

	միամյա, պարզ, ուղղաձիգ ցողուն, որի գագաթին կան մի քանի ճյուղեր՝ ծայրին բացվող բարձրադիր ծաղկազամբուղներով: Ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին:
Տարածվածությունը	Տարածված է ցածրադիր գոտուց մինչև մերձալպյան գոտի՝ Սևան, Ախուրյան, Ալավեղի, Սպիտակ և այլն: Աճում է անտառների եզրերին, մարգագետիններում, թփուտների մեջ:
Օգտագործումը	Ժողովրդական բժշկության մեջ հազարատերևուկի թուրմով բուժում են դիզենտերիան և այլ աղեստամոքսային հիվանդություններ: Նրա թուրմով դադարեցնում են ներքին արյունահոսությունները: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս բույսի ջրային թուրմն արյան մակարդեղիությունը բարձրացնում է 60%-ով, այսինքն գերազանցում է բժշկական պրակտիկայում օգտագործվող կալցիումի քլորիդի լուծույթներին: Ներկայումս արդյունաբերության կողմից թողարկվում է հազարատերևուկի հյութահանուկը, որը, բացի վերը նշվածից, օգտագործվում է նաև ախորժակի բացակայության, բարձր թթվայնության, փորլուծի, լնդերի բորբոքման ժամանակ ողողումների կատարելու և թուփի դեպքում լոզանքներ ընդունելու ձևով: Դեղի համար օգտագործվում է ամբողջ վերգետնյա մասը: Պետք է չորացնել հով տեղում և հետևել, որ գույնը չմզանա:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է ակալոիդ քուլին, կարոտին, ստախիդրին, բետոնիցին, ասկորբինաթթու, կապույտ գույնի եթերային յուղ, դաբաղանյութեր, օրգանական թթուներ, խեժանյութ և այլ թթուներ, վիտամիններ՝ C, K, E:

25.	<p>Պարոն</p> <p>Կոտեմ լայնատերև (նվարդակ, պարոն բանջար)</p> <p><i>Lepidium latifolium</i> L pepper</p>	
<p>Բույսի ժողովրդական անվանումը</p> <p>Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>		
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևները	
Տարեկան հավաքը կգ-ով	20-30	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	<p>Ուտելի բույս է, հավաքվում է համայնքային և հավաքողի համար անհայտ պատկանելիության ցանքատարածություններից՝ ապրիլ-մայիս, մայիս-հուլիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպած բույսը: Օգտագործվում է սեփական կարիքների և շուկայում վաճառելու համար՝ թարմ և չորացրած վիճակում: Հազվադեպ է հանդիպում կամ զանգվածային՝ առանձին վայրերում:</p>	
Ընդհանուր նկարագիրը	<p>Պատկանում է կաղամբազգիների (խաչածաղկավորների) ընտանիքին: Ցողունային տերևները հիմքում նեղացած են, սղոցաձև կտրտված, հազվադեպ ամբողջաձև, թեթև կաշվեկերպ: Բազմամյա է, ծաղկում է հունիս-օգոստոս ամիսներին:</p>	
Տարածվածությունը	<p>Տարածված է՝ Երևանի, Արմավյանի, Այդր լճի, Արմավիրի, Վաղարշապատի, Երասխի, Արարատի տարածքներում: Աճում է ծ/մ 800-2000մ բարձրություններում, աղուտ հողերում, աղբոտ վայրերում, խոնավ տեղերում, ջրերի ափերին, ցանքաշրջանառություններում:</p>	
Օգտագործումը	<p>Հավաքում են վաղ գարնանը, նախքան ծաղկելը, կանաչ զանգվածը եփում են, տապակում:</p>	

26.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Խատուտիկ Խատուտիկ (Ռադիզա) taraxacum officinale	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևը	
Տարեկան հավաքը կգ-ով	4-7	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտելի բույս է: Հավաքվում է հավաքողի համար անհայտ պատկանելիության և համայնքային արոտավայր/խոտհարքներից՝ ապրիլ-հունիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը, սեփական կարիքների համար: Օգտագործվում է թարմ վիճակում, պահանջարկը միջին է, նույնիսկ՝ փոքր: Հանդիպում է հազվադեպ կամ մասսայական՝ առանձին զանգվածային:	
Ընդհանուր նկարագիրը	Բարդաձողկավորների ընտանիքին պատկանող բազմամյա խոտաբույս է: Գլխավոր արմատը խորը մտնում է հողի մեջ, երբեմն հասնելով 0,5մ: Փետրաձև կտրտված (երբեմն ամբողջական) տերևները վարդակաձև դասավորված են ցողունի հիմքում: Տերևագուրկ, սնամեջ պարունակում են կաթնահյութ, ցողունների ծայրերին գտնվում են դեղին գույնի ծաղիկները՝ հավաքված զամբյուղ ծաղկաբույլերով:	
Տարածվածությունը	Հայաստանում տարածված է ամենուրեք: Աճում է բնակատեղիների մոտակայքում, ճանապարհների եզրերին, սարերի ավազուտ և խճուտ լանջերի վրա, գետակների երկայնքով, մարգագետիններում և այլն: Խատուտիկը մեծ համբավ է վայելում նաև Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Չեխիայում:	
Օգտագործումը	Որպես ուտելի բույս, խատուտիկի երիտասարդ տերևներից վիտամինային աղցաններ են պատրաստում: Դեղագործության մեջ օգտագործում են խատուտիկի հատկապես արմատները, ըստ	


	<p>պահանջի նաև ծաղիկներն ու տերևները: Չոր արմատներից ստամոքսային հիվանդությունների համար հյութ են պատրաստում: Նպաստում է լեղու գոյացմանը, լյարդի և լեղապարկի աշխատանքի կարգավորմանը: Մանր կտրատած արմատները բովելով ստացվում է սուրճ: Խատուտիկի արմատները հավաքում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Խնամքով լվանալուց հետո պետք է թողնել բաց օդում այնքան, մինչև արմատի կտրված մասերից հյութարտադրությունն ավարտվի: Այնուհետև դասավորել մեկ շերտով և չորացնել լավ օդափոխվող չորանոցներում:</p>
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է ինժ, դաբաղանյութեր, օրգանական թթուներ, կարոտին, վիտամիններ՝ A, C, B, E, P:

27.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Սիբեխ Սիբեխ <i>Falcaria vulgaris</i>	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևը	
Տարեկան հավաքը կգ-ով	25-40	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Նվազել է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ամենամեծ պահանջարկ ունեցող ուտելի բույս է: Հավաքվում է համայքնին պատկանող կամ հավաքողի համար անհայտ պատկանելիության արոտավայր/խոտհարքներից՝ ապրիլ-մայիս ամիսներին՝ երկու օրը մեկ հաճախականությամբ: Ամբողջությամբ հանվում է դանակով՝ հավաքվում է ընտրողաբար: Օգտագործվում է	


	սեփական կարիքների և շուկայում վաճառելու համար՝ թարմ վիճակում: Հանդիպում է զանգվածային՝ առանձին վայրերում:
Ընդհանուր նկարագիրը	Երկամյա խոտանման բույս է, հանդիպում են նաև բազմամյա ձևեր: Տերևները մերկ են, կաշվեկերպ, տերևաեզրերն ունեն սղոցանման կառուցվածք, առաջացնում են տերևային վարդակ, ապա նաև ծաղկացողուն: Տերևաթիթեղը բաժանված է 5-6 մասերի, որոնցից յուրաքանչյուրն այնքան խորն է կտրտված, որ կարծես առանձին տերև լինի: Տերևաթիթեղներն ունեն բացից մինչև մուգ կանաչ երանգ, որոնք սննդի համար պիտանի են միայն երիտասարդ հասակում: Հետագայում դրանք կոպտանում են և դառնում կաշվեկերպ և ուտելու համար ոչ պիտանի: Մայիսի կեսերից սիբեխը տերևային վարդակից ձևավորում է ծաղկացողուններ, որոնք մինչև ծաղկափթթությունների ձևավորումը նուրբ են և սննդի համար պիտանի: Սիբեխի ծաղկացողունը ունենում է 30-40սմ, երբեմն մինչև 110սմ երկարություն և ավարտվում է հովանոցանման ծաղկաբույլով:
Տարածվածությունը	Աճում է Հայաստանի անտառածածկ շրջաններում: Արարատյան դաշտի այգիներում, նախալեռնային գոտում, հիմնականում գետափերին, թփուտներում, մարգագետիններում՝ ընդգրկելով ՀՀ գրեթե բոլոր մարզերը՝ ծովի մակարդակից մինչև 2300մ բարձրություններում:
Օգտագործումը	Սիբեխի տերևային վարդակը հավաքում են սկսած մարտ ամսից, ապա մինչև մայիսի կեսերը: Հավաքում են նաև ցողունները, որոնք արժեքավոր վաղ զարնանային բանջարեղեն են օժտված նաև բազմաթիվ բուժիչ հատկություններով: Սիբեխի ինչպես տերևային վարդակը, այնպես էլ երիտասարդ նուրբ ցողուններն օգտագործում են սննդի մեջ, ունեն լայն կիրառություն ինչպես թարմ, այնպես էլ եփած, խաշած, չորացրած, թթու դրած վիճակում:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում է չոր նյութեր, վիտամիններ՝ A, C:
	Ընդհանրապես վայրած բանջարեղենները հարուստ են սննդարար նյութերով, հանքային աղերով, վիտամիններով և բուժիչ հատկություններով: Դրանց շարքում է նաև սիբեխը, որն իր

Մշակութային տեխնոլոգիաների և արտադրությունում ներդրելու հեռանկարները

գերվաղահասությամբ (վաղ գարնանային բանջարեղեն) և ժողովրդի մեջ ունեցած մեծ տարածմամբ հեռանկարային տեսակ է: Սիբեիի համար նախատեսված հողամասը պետք է նախապատրաստել աշնանից: Ցրտահերկից առաջ, ինչպես և մյուս տերևաբանջարների դեպքում, անհրաժեշտ է դաշտը պարարտացնել թարմ գոմաղբով՝ հա-ին 30-40տ նորմայով: Գոմաղբի բացակայության դեպքում, աշնանը պետք է հող մտցնել սուպերֆոսֆատ, կալիումական աղ, իսկ վեգետացիայի ընթացքում (կուլտիվացիաների ժամանակ) նաև ամոնիակային սելիտրա: Սիբեիսը կարելի է աճեցնել ինչպես սերմերով (աշնանը և գարնանը), այնպես էլ սածիլներով: Սերմերը ցանքից առաջ անհրաժեշտ է նախապես ենթարկել ստրատիֆիկացիայի և նույնիսկ ծլեցնել: Գերադասելի է սիբեիի ցանքը կատարել 2-3 գծանի ժապավենային եղանակով: Միջժապավենային տարածությունը վերցնել 45սմ, միջգծայինը՝ 25սմ, միջբուսային տարածությունը՝ 5սմ: Կախված ցանքի ձևից, մեկ հա ցանքատարածության վրա ծախսվում է 6-8կգ սերմ: Սածիլներով մշակելիս դաշտի սխեման հարմար է վերցնել 20x6սմ չափերով: Սիբեիի դաշտը բերքի մեջ է մտնում մեծամասամբ վեգետացիայի 2-րդ տարվանից, երբ այն արդեն կազմակերպում է հզոր և փարթամ տերևային վարդակ: Ծաղկացողունների բերքահավաքը կատարում են, երբ դրանք նուրբ են, փափուկ, հյութալի, ունեն մինչև 20սմ երկարություն: Դրանք կտրում են դանակով և խրձեր կապում: Բերքահավաքից հետո պետք է դաշտը քաղհանել, սնուցել և ջրել: Սերմ ստանալու նպատակով պետք է կատարել նույն աշխատանքները, իսկ հասունացած ծաղկացողունները պետք է կտրել, խրձեր կապել և չորացնելուց հետո կալսել ու քամհարել:

28.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	<p>Մինձ</p> <p>Մինձ մեծ (այծեմորուս, քոշմորուք, սպանախ) (այծեմորուս, այծեմորուս)</p> <p>Tragopogon major Jacq., Tragopogon pretense</p>	
Բույսի հավաքվող մասը	Տերևը և ցողունը	
Տարեկան հավաքը կգ-ով	3	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Անփոփոխ է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	<p>Ուտելի բույս է, հավաքվում է համայնքին պատկանող կամ հավաքողի համար անհայտ պատկանելիության արոտավայր/խոտհարքներից՝ ապրիլ-հունիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպած բույսը՝ հանվում է արմատով: Օգտագործվում է թարմ վիճակում՝ հիմնականում սեփական կարիքների համար: Պահանջարկը համեմատաբար փոքր է, հանդիպում է զանգվածային՝ առանձին վայրերում:</p>	
Ընդհանուր նկարագիրը	<p>Աստղաձաղկազգիների ընտանիքին պատկանող երկամյա կամ բազմամյա բույսեր են՝ կաթնանման հյուսված պարունակող խոտաբույսերի ցեղ: Ցողունն ուղիղ է, պարզ կամ թույլ ճյուղավորվող, բարձրությունը՝ 15-40սմ (60սմ): Տերևները հերթադիր են, նշտարաձև կամ գծանշտարաձև: Ծաղկաբույլը զամբյուղ է, ծաղիկները՝ երկսեռ, լեզվակավոր, դեղնավուն: Ծաղկում է մայիս-օգոստոս ամիսներին: Պտուղը երկարավուն իլիկաձև, սպիտակ, թափվող փոփոխվող սերմիկ է:</p>	
Տարածվածությունը	<p>ՀՀ-ում հայտնի են 12 տեսակ, որոնցից առավել կարևորվում են՝ T.grminofolius, T.pratensis, T.orientalis, T.sosnovskyi: Տարածված են ՀՀ բոլոր մարզերում: Աճում են մարգագետիններում,</p>	


	տափաստաններում, անտառի բացատներում, քարքարոտ լանջերին:
Օգտագործումը	Որոշ տեսակներ դեղաբույսեր են: Կան սննդի մեջ օգտագործվող տեսակներ: Նաև մեղրատու և կերային բույս է: Տերևավարդակները հավաքում են ապրիլից սկսած, իսկ ծաղկացողունները՝ մայիս-հունիս ամիսներից, որը արժեքավոր բանջարեղեն է, օժտված նաև բուժիչ հատկություններով:
Կենսաբանական ակտիվ նյութերը	Պարունակում են ինուլին, կաուչուկ:

29.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Սպանախ Սպանախ քառամեջ Spinacia tetrandia Stev.	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևները	
Տարեկան հավաքը կգ-ով	10	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Նվազել է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտելի բույս է, հավաքվում է ցանքատարածքներից և արոտավայր/խոտհարքներց՝ ապրիլ-հունիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը: Օգտագործվում է սեփական կարիքների համար՝ թարմ վիճակում: Հազվադեպ է հանդիպում:	
Ընդհանուր նկարագիրը	Գրանցված է Կարմիր գրքում, նկատելի է տարածման արեալների կրճատումը: Հայաստանում սպանախ մշակաբույսի մասին շատ հին վկայություններ կան: Բույսն ունի 10-40սմ բարձրություն, միամյա և երկտուն է: Ունի գիտական և սելեկցիոն նշանակություն: Իգական բույսերի ծաղիկները բեղնավորվելուց հետո սերտաձեղով միմյանց,	

	<p>երբեմն նաև տերևաթիթեղի հիմքի հետ, կազմում են կնձիկներ: Դրանք հասունանալիս փայտանում են, ունեն նաև փշանման սուր ելուստներ: Վայրի սպանախը ցրտադիմացկուն է: Փորձերով ապացուցվել է այն ենթադրությունը, որ բույսերի զարգացումը կախված է օդի ջերմաստիճանից, այսինքն նաև ցանքի ժամկետից:</p>
Տարածվածությունը	<p>Հազվադեպ տեսակ է, գտնվում է ոչնչացման եզրին: Հանդիպում է քարքարոտ վայրերում, կավային լանջերին, նախալեռներում և ներքին լեռնային գոտում՝ 800-1400մ բարձրություններում՝ վայրի ցորենների հետ: Հայաստանում սպանախի տարածման արելաները հիմնականում ընդգրկում են Երևանի հյուսիս-արևելյան շրջակայքը (Ջրվեժ, Էրեբունի արգելոց), ինչպես նաև Արարատյան դաշտի մի շարք բնակատեղեր (Խոբ-Վիրապ, գ.Սովետաշեն, գ.Արմաշ-Արարատի մարզ):</p>
Օգտագործումը	<p>Հայաստանում (հատկապես այն շրջաններում, որտեղ հանդիպում է վայրի սպանախը) մարդիկ օգտագործում են այն սննդի մեջ որպես վաղ զարնանային բանջարեղեն:</p>
Կենսաբանական ակտիվ նյութերը	<p>Տերևները պարունակում են պրովիտամին A: Ծաղկման շրջանում պարունակում է վիտամինների առավելագույն քանակություն՝ վիտամիններ՝ D, K, B, B₁, չորացած տերևներում՝ վիտամին C:</p>

30.		
Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)	Սպիտակ բանջար Սպիտակ բանջար, Պուշկինա մկնաստիխանման, ալայագ, սիվտրկուն Pusckinia scilloides Adam	
Բույսի հավաքվող մասը	Ցողունը և տերևները	
Տարեկան հավաքը կգ-ով	5-8	
Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ	Նվազել է	
Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը	Ուտելի բույս է, հավաքվում է համայնքային հողերից՝ մայիս-հուլիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպած բույսը՝ արմատախիլ անելով: Օգտագործվում է սեփական կարիքների համար՝ չորացրած վիճակում: Հանդիպում է զանգվածային առանձին վայրերում:	
Ընդհանուր նկարագիրը	Շուշանզգիների ընտանիքին պատկանող բազմամյա սոխուկավոր բույս է: Ողկույզները գագաթնային են՝ կազմված 3-10 ծաղիկներից: Ծաղկապատը բաց երկնագույն է՝ դրսի կողմից մուգ երկնագույն շերտիկներով: Թերթիկները 2-3 անգամ երկար են, քան զանգականման խողովակը: Պսակը երեք անգամ կարճ է ծաղկապատից, վեցաբաժան է: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, բարձրությունը հասնում է 10-30սմ-ի:	
Տարածվածությունը	Տարածված է հատկապես Արարատյան դաշտի նախալեռնային գոտում, Եղվարդում, Ջրվեժում, Գառնիում, Ուրցի լեռնաշղթայում, Գեղաքունիքի և Վայոց Ձորի մարզերում՝ թփուտներում, խոտածածկ լանջերին:	

<p>Օգտագործումը</p>	<p>Բացի այն, որ հրաշալի դեկորատիվ բույս է, միաժամանակ օգտագործվում է սննդի մեջ որպես վայրի բանջարաբույս: Տերևները համեղ են և սննդաբար: Հավաքում են ծաղկման սկզբում, հյուսք անում և չորացնում ստվերում: Ունի բուժիչ հատկություն:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է մեծ քանակությամբ ալկալոիդներ</p>

<p>31.</p>	<p>Փիփերթ Փիփերթ կլորատերև Malva neglecta Wallr</p>	
<p>Բույսի ժողովրդական անվանումը Ցեղը և տեսակը (հայերեն և լատիներեն անվանումը)</p>		
<p>Բույսի հավաքվող մասը</p>	<p>Ցողունը և տերևները</p>	
<p>Տարեկան հավաքը կգ-ով</p>	<p>5-8</p>	
<p>Պաշարի վիճակը՝ նախորդ տարիների համեմատությամբ</p>	<p>Անփոփոխ է</p>	
<p>Հավաքի վայրը, ժամկետը և օգտագործումը</p>	<p>Համեմատաբար շատ հավաքվող ուտելի բույս է: Հավաքվում է մասնավոր հողերից՝ ապրիլ-մայիս ամիսներին: Հավաքվում է յուրաքանչյուր հանդիպածը: Օգտագործվում է սեփական կարիքների համար՝ թարմ վիճակում: Պահանջարկը միջին է: Քիչ է հանդիպում կամ զանգվածային՝ առանձին վայրերում:</p>	
<p>Ընդհանուր նկարագիրը</p>	<p>Բույսը գարնան վաղ շրջանում (ապրիլ-մայիս) առաջացնում է վարդակ, որի տերևներն ունեն 7-10սմ երկարության հասնող, կիսաշրջանի նմանվող կառուցվածքով տերևակոթուններ: Տերևաթիթեղները կլոր, շատ թույլ արտահայտված, կլոր ատամնաեզրերով են, թույլ ալիքավոր, իրար հավասարազոր կենտրոնական ջղերով: Տերևաթիթեղը նուրբ է, առանց թավի կամ շատ թույլ արտահայտված թավով: Վարդակում ձևավորվում են 10-17</p>	

	<p>տերևներ: Տրտադիմացկուն է, ձմեռում է միայն բույսի արմատային համակարգը: Վեգետացիայի ընթացքում ձևավորվում են շատ խորը գնացող հաստ արմատներ, որոնցում կուտակված օրգանական նյութերի հաշվին էլ կազմակերպվում է փարթամ տերևային վարդակը և սողացող ընձյուղները: Արմատը հաստ է, առանցքային (բազմամյա հասակում), հողի մեջ խորանում է մինչև 60-100սմ: Առատ ճյուղավորված է կողքային բազմաթիվ արմատներով:</p>
<p>Տարածվածությունը</p>	<p>Հանդիպում է գրեթե ամենուրեք, Հայաստանի բոլոր մարզերում՝ ծովի մակարդակից 800-1870մ բարձրություններում: Բայց ավելի շատ տարածված է Արարատյան դաշտում և նրա նախալեռնային գոտում:</p>
<p>Օգտագործումը</p>	<p>Փիփերթը որպես դեղամիջոց բժշկության մեջ օգտագործվում է հնագույն ժամանակներից: Հայ միջնադարյան, ինչպես նաև ժամանակակից բժշկության մեջ օգտագործում են ծաղիկները, նաև տերևները, իսկ որպես վիտամիններով հարուստ տերևաբանջար կամ տեխնիկական (ներկատու) ու կերաբույս կարևոր նշանակություն կարող է ստանալ: Մշակության մեջ ներդնելիս ամռան շրջանում, երբ տերևները և հատկապես ընձյուղները կոպիտ են, կարելի է հնձել և օգտագործել որպես կանաչ անասնակեր: Ազատ, բաց դաշտերը կարելի է օգտագործել որպես արոտավայր:</p>
<p>Կենսաբանական ակտիվ նյութերը</p>	<p>Պարունակում է պրովիտամին A, սերմերի մեջ՝ ճարպեր և յոդ:</p>
<p>Ագրոտեխնիկական և արտադրությունում ներդնելու հեռանկարները</p>	<p>Փիփերթը որպես բազմամյա բանջարային բույս, նպատակահարմար չէ տեղադրել բանջարային ցանքաշրջանառության մեջ: Այն միննույն տեղում լավ աճում և փարթամ տերևային մակերես է առաջացնում 5 տարի, որից հետո տնկարքները ծերանում են և անհրաժեշտ է լինում դրանք երիտասարդացնել: Փիփերթը պետք է մշակել այնպիսի հողակտորներում, որոնք քամիներից պաշտպանված են և ապահովված խոնավությամբ: Նրանք լավ են աճում խոր վարելաշերտով, կավավազային մեխանիկական կազմ ունեցող հողերում: Լույսի նկատմամբ շատ մեծ պահանջ չունեն և դրա համար էլ կարելի է անգամ մշակել բազմամյա տնկարքների՝ այգիների միջջարային տարածքներում: Փիփերթը շատ պահանջկոտ չէ հողի</p>

	<p>աննդատարրերի նկատմամբ, սակայն նրան հատկացված տարածքը պետք է նախապատրաստել աշնանից՝ կատարելով խորը՝ 30սմ ցրտահերկ: Փիփերթը մշակում են սերմերով, որոնք բաց դաշտում կարելի է ցանել աշնանը և գարնանը: Շատ լավ արդյունք է տալիս սերմերը նախապես թրջելուց հետո գարնանը ցանել: Փիփերթը լավ է մշակել երկգծանի կամ եռագծանի ժապավենաձև սխեմայով, շարքերի միջև թողնելով մոտ 20սմ, իսկ ժապավենների միջև՝ 45-50սմ տարածություն: Մոլախոտերով վարակված դաշտում լավագույն ցանքի ձևը շարայինն է, որի դեպքում հնարավոր է ավելի ինտենսիվ պայքար մղել մոլախոտերի դեմ: Շարային ցանքի դեպքում մեկ հա-ին պահանջվում է 9-10կգ, ժապավենային ցանքի դեպքում՝ 14-15կգ սերմ: Վեգետացիայի ընթացքում ամենակարևոր ագրոմիջոցառումներից են քաղհան-փխրեցումները 2-4 անգամ և ոռոգումները: Ըստ անհրաժեշտության կարելի է տալ սնուցում 2 անգամ ազոտական պարարտանյութերով: Բերքահավաքը կատարում են վաղ գարնանից, երբ ցողունների երկարությունը հասնում է 10-15սմ-ի: Մուր դանակով կտրում են այդ ցողունները, խրձեր են կապում և տեղափոխում սպառման: Փիփերթի բերքահավաքը կատարում են ընտրողաբար՝ 10-15 օրը մեկ: Մեկ հա-ից ստացվում է միջինը 10տ բերք:</p>
--	--